

26(629)
30.09.2021

Չրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՃԱՆԱԶՆԵԼ ՈՒ ԳՎԱԽԵՆԱԼ ԹՇՆԱՍՈՒՅ

Այն, որ ազգերին երբ սաստիկ ատելություն ունեն արցախցիներին նկատմամբ, ակամատես ենք եղել բազմիցս՝ սկսած սուվերենի ռեալիզմից մինչև մեր օրերը: Բնականաբար, այդ ատելությունը խորքային պատճառներ էլ ունի, որոնց մասին ևս հիմնավոր փաստերով խոսվել է տարիներ շարունակ:

Ատել արցախցուն, ըստ ազգերիների, նշանակում է՝ ատել Արցախի Հանրապետության պետական խորհրդանիշները: Մերձկասպյան թրքացեղը գիտի, որ այդ խորհրդանիշների մեջ խտացված է հայի զորեղ ոգին: Անգամ 44-օրյա դավադիր պատերազմում, երբ փոքրիկ Արցախի դեմ էր ելել բուրբակյան ռազմական կոալիցիան, այդ ոգին անսասան մնաց՝ թեպետ մարմինը ծանր վիրավոր էր:

Վերջերս Գորիս-Կապան ավտոճանապարհին արցախցի պատանի ֆուտբոլիստների հետ կապված միջադեպը, երբ ազգերի ոստիկանը սպառնալիքներ տեղադրվելով՝ դանակ-սվինով քերեց միկրոավտոբուսին պատկերված Արցախի Հանրապետության դրոշմը, կրկին փաստում է նենգաբարո մեր հարևանների ստոր լուրջությունը: Մեր անհաշտ հարաբերությունների դառը փորձից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ եթե չլինեին մոտակայքում ռուս զինվորների զգաստացնող ներկայությունը, ապա ազգերիները պատանու կվերցնեին արցախցի մարզիկներին: Բայց դրոշի հետ կապված նրանց վարմունքը արդեն իսկ խոսում է վերջիններիս աննահանջ հայատյացության մասին:

Շատ կարևոր է նաև մեր պատանիների արժանապատիվ պահվածքը: Նրանք չվախեցան զինված ոստիկանից, որովհետև պատմությունից գիտեն՝ ազգերին իր բնատուր դաժանությամբ հանդերձ շատ վախկոտ է:

Անչափահասներին ահաբեկելն ինքնին հանցագործություն է, իսկ եթե դա կատարվել է էթնիկ պատկանելության հողի վրա, ապա հանցանքը ծանրագույն որակում է ստանում, որին պիտի միջազգային իրավասու կառույցները համապատասխան գնահատական տան:

Դեպքի առնչությամբ իր ֆեյսբուքյան էջում ուշագրավ անդրադարձ է արել ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը: Նա մասնավորապես գրել է. «Արցախի մանկապատանեկան թիմին տեղափոխող ավտոբուսի հետ կատարվածը ահաբեկության դասական օրինակ է: Սա Բեսլանի սարսափը վերապրելու և զգալու առիթ դարձավ: Իսկ Արցախի տարբերանշանը քերելը կարծրացող հայատյացության ևս մի ապացույց է: Սպորտը քաղաքականացման ենթակա չէ, ահաբեկման՝ առավել ևս:

Մեր մարզիկները չեն տրվել թուրք ահաբեկչի սադրանքին: Նրանք կշարունակեն սպորտով նվաճել բարու, հաղթանակի, ուժի, ինքնահաղթահարման սահմանները»:

Մի փոքրիկ հավելում. բարու և ինքնահաղթահարման ուժի սաղմերը դրվում են դպրոցում, և ճիշտ դաստիարակության շնորհիվ է արցախցի պատանին կարողանում ճանաչել թշնամուն և չվախենալ նրանից:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Յո՛վի. ԹՈՒՄԱՆՅԱԼ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին՝ Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին, Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ ծովից մինչև ծով Մարած են, մեռած, փրկված ու ցրված հազար հազարով... Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից, Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրուք, Թանդուրեք, Հայոց աշխարհի մեծ կերտները վառեցի մեկ-մեկ, Սուրբ Արագածի կամթեղն էլ, ինչպես հեռավոր արև, Անհաս, անընվազ, միշտ վառ ու պայծառ, իմ զըլխի վերև...

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման, Կանչեցի թըշվառ էն հոգիներին՝ ցըրված հավիտյան Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց, Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ: - Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ... Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...

Աջիցըս եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ծենքով, Սաղմոս կարդալով՝ անցան, զընացին խոր-խոր ծորերով, Ամպերն էլ ելան Չիրավի ծորից, հըսկա բուրվառից, Ճանապարհ ընկան ծաղկանց սարերից, Հայկական պարից, Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,

ՀՈԳԵՆԱՆԳԻՍ

Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց, Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ... - Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ... Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱՆ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբերի 19-21-ը Ստեփանակերտում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նվիրված Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին, որը կազմակերպվել է ԱՀ Ազգային ժողովի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ: Մասնակցում էին գիտնականներ Հայաստանից, Արցախից, Ռուսաստանի Դաշնությունից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից:

Աշխատանքների մեկնարկը տրվեց ԱՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճից: Մասնակիցները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին հանուն մեր հայենիքի, մեր պետականության ընկած նահատակների լուսե հիշատակը...

Ողջույնի խոսքով հանդես եկան ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես

Եպիսկոպոս Աբրահամյանը: ԱՀ նախագահ Արախի Հանրապետության խոսքը ներկայացրեց խոսնակ Լուսինե Ավանեսյանը:

Լիազումար զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ԱՀ ԱԺ արտաքին հարաբերությունների համեմատողի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանը, ՀՀ ԳԱԱ պատմավոր անդամ Ռուբեն Գալչյանը (Լոնդոն), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսան Գալոյանը, իսկ սահմանադրական և միջազգային իրավունքի մասնագետ, պրոֆեսոր Օտտո Լուխտերհանդտի (Գերմանիա) զեկուցումն ընթերցեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ Լիլիթ Հովհաննիսյանը:

Ձեկուցողները բարձրացրին ԵԱԿ Մինսկի խմբի շրջանակում ԼԴ խնդրի համապարփակ

կարգավորման, Արցախի իրավական կարգավիճակի վերջնական որոշման՝ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացման և ԼԴՀ անկախության ճանաչման հարցերը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվել են մասնախմբային նիստերում:

Սեպտեմբերի 21-ին գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Գանձասար, մասնակցեցին «Աղբբեջանի ցեղասպանական վաթը. պատմություն և արդիականություն (իրավաբանական գնահատականից մինչև միջազգային դատարան)» ժողովածուի շնորհանդեսին, որում անփոփանդ են 1920թ. հուլիսին տեղի ունեցած Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովի զեկուցումները:

Սեպտեմբերի 23-ին գիտաժողովն իր աշխատանքը շարունակեց Երևանում՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ ԳԾԵԼ ԵՆ ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի խոսքը Արցախի Հանրապետության և Հայաստանի (3-րդ) Հանրապետության անկախության 30-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում



Հիրավի, այսօր խիստ անսովոր պայմաններում ենք նշում Հայաստանի երրորդ Հանրապետության և Արցախի Հանրապետության անկախության հռչակման 30-րդ տարին. բզկտված, կորստի տառապանքից բորբոքուն, ցատունի ու վրեժի ծարավով լեցուն, ծանրացած խոհերով ու հոգեցունց:

Այնուհանդերձ, անկախությունը եղել է բացատրագիր ու պատգամ առ այն, որ մեր լինելությունը, արարչաստեղծ տեսակն ու ինքնությունը ուրույն և անխոցելի են անկախության բարձրագույն արժեքի շնորհիվ:

Անկախությունը մեր հոգևոր ու գաղափարական ինքնակազմա-

կերպավորությունն է, դրա բարձրագույն դրսևորումը:

Չէի ցանկանա անդրադառնալ կամ վերհիշել մեր պետականության կորստի երկար ու ծիգ տարիները: Ինչո՞ւ, որովհետև պետության և անկախության կորստից են ածանցվել մեր ազգի դիմադրողականությունը թուլացնող բազում բացասական որակներ՝ երկրորդական ու կախյալ լինելուց մինչև թերաթեքության ու գոհի զգացողություն:

Պատմաժամանակագրական տարբեր փուլերում մեր պետականությունն անցել է տարբեր փորձությունների՝ Տիգրան Մեծից մինչև Արշակունիներ, Հայաստանի առաջին

Նիկոլ Աղբալյանը թունամանյանի գրած նամակներից մեկում «Հավատո հանգանակ» էր որոնում: Մենք այլևս համոզված ենք, որ դա մեր հոգևոր, ինտելեկտուալ, բարոյական, գաղափարական, ուժային և բոլոր ռեսուրսների մեկտեղումն է, դա մեկ ուղղությամբ նայելն է:


Լիախոս եմ, գիտաժողովի ընթացքում ներկայացված գիտական զեկուցումների և կատարված քննարկումների արդյունքն ու ընդունված եզրակացության կարևոր ուղերձը կդառնան «Ազգային միասնությամբ՝ դեպի մեր վերածնունդ ու հզոր ազգային պետականություն» գաղափար, քանզի միայն այդ սուրբ գաղափարն է մեր կորուստների հատուցման, ինչպես նաև մեր համազգային լուսավոր ապագայի հիմնավոր երաշխիքն ու կարևորագույն գործոնը: Անկասկած, ներկայումս հսկայական գործ ունենք կատարելու կանխատեսելի ապագայի համար:

Ողջունում եմ գիտաժողովի մասնակիցներին: Համոզված եմ, որ գիտաժողովի մթնոլորտն իրապես նպաստավոր կլինի մեր գաղափարների առաջադրման և դրանք իրականություն դարձնելու համար:

Նահատակները գծել են մեր պարտականությունները բոլոր սահմանները, և նրանց հետ մեր ժամադրությունը արդեն առօրյա է:

ՀԱՅԱՅԷ ԴՐՍԻՑ

ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՉՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ) ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ



Հայաստանի (երրորդ) Հանրապետության և Արցախի Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովին էին բավականին ծանրակշիռ զեկուցումներ: Ներկայացնե՞ք իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Օտտո Լուխթերհանդտի (Համբուրգի համալսարանի իրավաբանության ֆակուլտետ, Գերմանիա) զեկուցումը:

Այս ամսվա վերջին, այսինքն՝ մի քանի օրից կլրանա Ադրբեյջանի՝ Արցախի Հանրապետության վրա հարձակման առաջին տարեկիցը: Դա սկիզբն էր այն երեք պատերազմներից մեկի, որոնք Ադրբեյջանը մղել է Լեռնային Ղարաբաղի դեմ՝ սկսած 1991 թվականից:

Ադրբեյջանի Հանրապետությունը հաղթեց, քանի որ, առաջին՝ նրա զինված ուժերը ստացան զանգվածային, արդյունավետ և բազմաբնույթ աջակցություն թուրքիայի կողմից, երկրորդ՝ քանի որ Ադրբեյջանն իր տրամադրության տակ ուներ շատ ավելի մեծ թվով արդիական մարտական համալիրներ, քան հայկական կողմը և կարողացավ կիրառել հատկապես իսրայելական և թուրքական արտադրության բարձր արդյունավետություն ունեցող մարտական անօդաչուներ, երրորդ՝ քանի որ Ադրբեյջանն ի սկզբանե բարբարոսաբար ռմբակոծեց Արցախի քաղաքացիական օբյեկտները՝ Արցախի քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու համար, այսինքն՝ արհամարհեց և խախտեց միջազգային իրավունքով սահմանված՝ պատերազմ վարելու մարդասիրական արգելքները, չորրորդ՝ քանի որ հայկական զինված ուժերը լիովին միայնակ էին դիմակայում իրենց գերազանցող թշնամուն, այսինքն՝ չստացան աջակցություն որևէ երրորդ կողմից և վերջապես, հինգերորդ՝ քանի որ Հայաստանում առկա քաղաքական լարվածությունը թուլացնում էր հայկական զինված ուժերի կառավարումը:

Այս գործոնների արդյունքը հանդիսացավ 2020թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի միջնորդությամբ կնքված հրադադարի պայմանագիրը, որն ուժի մեջ մտավ 2020թ. նոյեմբերի 10-ին: Այն արդարացիորեն մեծ ցնցում առաջացրեց ողջ հայ ժողովրդի մոտ, քանի որ դրա ծանր և ցավոտ պայմանները կապիտուլյացիայի են նմանեցնում համաձայնագիրը:

2020թ. նոյեմբերի 9-ին կնքված հրադադարի համաձայնագիրը չի կարող վերջին խոսքը լինել այսպես կոչված դարաբաղյան հակամարտության մեջ միայն այն պատճառով, որ համաձայնագիրը չի բարձրաձայնում հակամարտության հիմնախնդիրները: Եվ դա շատ տրամաբանական է, քանի որ միայն ինը կետերից բաղկացած և հետևաբար շատ հակիրճ համաձայնագիրն ամբողջությամբ կենտրոնացած է հրադադարի հաստատման և Ռուսաստանի խաղաղապահ առաքելության ուժերով վերջինիս պահպանման վրա: Համաձայնագիրը ոչ մի բառով չի անդրադառնում բոլոր այն սկզբունքային հարցերին, որոնք առնչվում են Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակին, Լեռնային Ղարաբաղի տարածքային սահմաններին, Արցախի ներքին կառավարման համակարգին և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերին: Այն չի անդրադառնում նաև ԵԱՀԿ-ին և վերջինիս կողմից «Դարաբաղյան հակամարտության» կարգավորմանն աջակցելու նպատակով ստեղծված Մինսկի խմբին: Արդյունքում չեն հիշատակվում նաև Մինսկի

խմբի համաձայնագրերը, այսինքն՝ Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ն, ինչպես նաև ԵԱՀԿ-ի կողմից համաձայնագրերին վստահված մանդատն ու գործառույթները:

ԵԱՀԿ-ի կամ Մինսկի խմբի մասին հղումների բացակայությունը հատկապես ուշագրավ է ինչպես իրավական, այնպես էլ քաղաքական տեսանկյունից, քանի որ հրադադարի մասին համաձայնագրի 7-րդ կետում հստակ նշված է մեկ այլ միջազգային կազմակերպության՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ): Համաձայնագիրը վերջինիս հանձնարարում է վերահսկել և կառավարել «ներքին տեղահանվածների և փախստականների վերադարձը Լեռնային Ղարաբաղի տարածք և հարակից շրջաններ»:

Այն, որ նոյեմբերի 9-ի հրադադարի համաձայնագիրը չի անդրադառնում և, հետևաբար, չի լուծում դարաբաղյան հակամարտության էական և սկզբունքային խնդիրները, նշանակում է երկու բան. առաջին, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ կապված բոլոր հարցերը դեռ լուծված չեն և երկրորդ, որ այժմ պետք է գործադրվեն բոլոր հնարավոր քաղաքական ջանքերը դարաբաղյան հակամարտության երկարաժամկետ և արդար կարգավորման համար: Ակնհայտ է, որ դրա համար անհրաժեշտ քայլերը պետք է ձեռնարկվեն ԵԱՀԿ շրջանակներում և Մինսկի խմբի՝ մինչև այժմ կատարած աշխատանքի հիման վրա, և նույնքան ակնհայտ է, որ Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես Մինսկի խմբի համաձայնագրի անդամ և Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ առաքելության կազմակերպիչ, առանցքային տեղ է զբաղեցնում և կրում հատուկ պատասխանատվություն Լեռնային Ղարաբաղի համար: Քանի որ Ռուսաստանի խաղաղապահ ուժերի ներկայությունը Լեռնային Ղարաբաղում հրադադարի համաձայնագրի համաձայն սկզբունքորեն սահմանափակված է հինգ տարի ժամանակով, այս ընթացքում պետք է ձեռնարկվեն բոլոր ջանքերը, որպեսզի դարաբաղյան հակամարտությունը վերջնականապես լուծվի բոլոր կողմերի կողմից: Միայնակ կողմերի համաձայնությունը: Նպատակին կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե հակամարտության կողմերը միմյանց ընդառաջ գնալու և փոխզիջման պատրաստակամություն ցուցաբերեն:

Ստորաշարադրյալ դիտողությունները սահմանափակվում են, առաջին՝ հակամարտության կարգավորման հարցում հայկական կողմի ամենակարևոր և որոշիչ քաղաքական շահերի ու նպատակների ձևակերպմամբ և երկրորդ՝ դրանց հասնելու ուղիները նշելով:

III Ձինադադարի համաձայնագիրն արդեն իսկ նշում է որոշ հրատապ առաջադրանքներ, որոնք են. առաջին՝ ռազմական գործողությունների ընթացքում գերի ընկածների և զոհվածների մարմինների փոխանակում (7-րդ կետ), երկրորդ՝ փախստականների վերադարձ իրենց բնօրրանը՝ Լեռնային Ղարաբաղում և Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններում (8-րդ կետ) և երրորդ՝ Լաչինի միջանցքով Գորիսից Ստեփանակերտ ճանապարհային հաղորդակցության ապահովում (6-րդ կետ):

Հրադադարի մասին համաձայնագրի 9-րդ կետը բոլորովին նոր խնդիր է նշում, այն է՝ բոլոր տնտեսական կապերի և «տարածաշրջանի բոլոր տրանսպորտային հանգույցների ապաշրջափակում»: Տվյալ դրույթն ակնհայտորեն կապված է հրադադարի համաձայնագրի հետ: Ավելի շուտ այն ձևակերպում է քաղաքական ու գործնական նպատակ և նախատեսված է դառնալ Հարավային Կովկասում միջպետական հարաբերությունների խաղաղ վերանայման մաս՝ հիմնված «խաղաղ հարևանության» և «հանուն փոխադարձ շահերի լավ համագործակցության» սկզբունքների վրա: Համաձայնագրի այս հեռահար դրույթը չի դիտարկվում հաջորդող կետերում:

IV Գրույթը, որի համաձայն փախստական-

ներն իրավունք ունեն ՄԱԿ-ի վերահսկողության ներքո վերադառնալ Լեռնային Ղարաբաղ և հարակից տարածքներ, ըստ տրամաբանության օրենքների պահանջում է հստակ պատասխան այն հարցին, թե ինչ է ենթադրվում համաձայնագրի մեջ «Լեռնային Ղարաբաղ» և Լեռնային Ղարաբաղի «տարածք» հասկացությունների տակ: Հետևաբար, այս հարցի պատասխանը առաջնահերթ և չափազանց կարևոր է ոչ միայն փախստականների՝ իրենց տներ և բնակության վայրեր վերադառնալու՝ համաձայնագրով ճանաչված իրավունքի առումով, այլև ակնհայտորեն նաև այն պատճառով, որ դրանից են կախված դարաբաղյան հակամարտությունը կարգավորող Մինսկի խմբի մանդատի բովանդակությունն ու շրջանակները:

«Լեռնային Ղարաբաղ» և նրա «տարածք» հասկացությունները ԵԱՀԿ/ԵԱՀԿ-ի (1994 թվականից), ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵՄ-ի և այլն միջազգային փաստաթղթերում միշտ հասկացվել են որպես «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի» (ԼԴԻՄ) տարածք: Այս առումով հատկապես կարևոր է ԵԱՀԿ դիրքորոշումը: Մինսկի խումբը և նրա համաձայնագրերում միշտ տարբերել են Լեռնային Ղարաբաղը և Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեյջանական շրջանները: Այս տարբերակումը միշտ եղել է Հայաստանի և Ադրբեյջանի միջև դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների հիմքում:

Մինչ օրս Ադրբեյջանի Հանրապետության վերաբերմունքն այս խնդրին վիճակագրային է, քանի որ այն մի կողմից ընդունեց ԵԱՀԿ-ի իրավական դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի վերաբերյալ որպես փաստ և առանց բողոքի, պաշտոնապես և անընդհատ մասնակցելով դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններին, սակայն մյուս կողմից Ադրբեյջանի Գերագույն խորհուրդը «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը» հայտարարեց կազմավորված և վարչականորեն վերակազմակերպեց տարածքը 1991 թվականի նոյեմբերի 23-ին ընդունված օրենքով, այսինքն՝ դեռ խորհրդային Միության գոյության ժամանակ: Սակայն, այս օրենքն անվավեր էր և չունեց իրավաբանական ուժ, քանի որ այն ակնհայտորեն հակասում էր ԽՍՀՄ Սահմանադրության 87-րդ հոդվածին, որը դեռ գործում էր 1991 թվականի նոյեմբերին և երաշխավորում էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կարգավիճակը, ինչպես նաև ԽՍՀՄ՝ 1990 թվականի ապրիլի 3-ին ընդունված ԽՍՀՄ-ի կազմից խորհրդային հանրապետության դուրս գալու մասին օրենքին: Հետևաբար, Հաղորդի և Ավերանի շրջանների լուծարումը նույնպես չունեց իրավական ուժ:

Ի դեպ, օրենքը ոչ այլ ինչ էր, քան իրականությանից կտրված մի գրություն, քանի որ քաղաքական իրականության մեջ Ադրբեյջանն այն ժամանակ այլևս չէր վերահսկում Լեռնային Ղարաբաղին:

Արդյունքում պետք է փաստել, որ համաձայնագրի 1-ին, 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերում նշված «Լեռնային Ղարաբաղ» հասկացությունը նշանակում է 1923 թվականին ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածք: Քանի որ հրադադարի համաձայնագիրն ունի միջազգային իրավական պայմանագրի բնույթ, Արցախի դիրքորոշումը, համաձայն որի իր տարածքային սահմանները նույնական են ԼԴԻՄ-ի սահմանների հետ, լեգիտիմացված է միջազգային իրավունքով:

Սակայն Հայաստանն ու Արցախը չպետք է կանգ առնեն այս հայտարարության վրա, այլ պետք է իրենց ողջ տնտեսում ու համառությամբ ներկայացնեն այս իրավական դիրքորոշումը լրատվամիջոցներում և միջազգային ասպարեզում: Դա ռազմավարական նշանակություն ունի:

V Իրավական այն սահմանում, որ Լեռնային Ղարաբաղը շարունակում է գոյություն ունենալ ԼԴԻՄ տարածքային սահմաններում, գործնական մեծ նշանակություն ունի, քանի

որ այն պաշտպանում է Հաղորդից, Շուշիից և այլ շրջաններից փախստական կամ տեղահանված դարաբաղահայերի՝ իրենց բնակության վայրերը առանց խոչընդոտների վերադառնալու օրինական պահանջը: Սա էլ ավելի է ամրապնդվում հրադադարի համաձայնագրի 7-րդ կետով և ՄԱԿ ՓԳՀ-ի ներքին տեղահանված անձանց՝ իրենց համապատասխան տարածքներ և բնակավայրեր վերադարձը կազմակերպելու և վերահսկելու մանդատով: Հետևաբար, փախստականների վերադարձի կազմակերպումն ու իրականացումը, հատկապես Հաղորդի շրջան, առաջնահերթ խնդիր է նաև Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների՝ որպես հրադադարի համաձայնագրի երաշխավորներ, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի և նրա երեք համաձայնագրերի համար:

Լեռնային Ղարաբաղի՝ որպես ԼԴԻՄ-ի սահմաններում գոյությունը շարունակող վարչական տարածքի առկայությունը իրավական հիմք է տալիս մեկ այլ պահանջի և առաջնահերթ իրականացման ենթակա առաջադրանքի համար, այն է՝ Ղարաբաղի Հաղորդի և Շուշիի շրջանների վարչական մարմինների վերականգնումը և նրանց՝ Ստեփանակերտի կենտրոնական վարչական ենթակայության տակ անցնելը: Արդյո՞ք այս պահանջը լիովին համատեղելի է հրադադարի պայմանագրի հետ: Այո և ավելին՝ իրավական տեսանկյունից ամրագրված է համաձայնագրով, քանի որ համաձայնագիրը հաստատում է Լեռնային Ղարաբաղի գոյությունը ԼԴԻՄ-ի տարածքային սահմաններում:

2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի համաձայնագիրը չփոխեց ԼԴԻՄ սահմանները Լեռնային Ղարաբաղում: Չմայած ադրբեյջանական զորքերը առաջ անցան մինչև Շուշի քաղաք և գրավեցին Հաղորդի շրջանը, սակայն այս գուտ ռազմական փաստը չփոխեց Լեռնային Ղարաբաղի ներքին և արտաքին վարչական սահմանները: Սա միանշանակ բխում է համաձայնագրի 1-ին կետից, քանի որ այն չի կարգավորում կամ սահմանում վարչական սահմանի դեմարկացիա, այլ միայն նախատեսում է, որ հայկական և ադրբեյջանական զորքերը մնան այնտեղ, որտեղ գտնվում էին հրադադարի պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին, այսինքն՝ 2020թ. նոյեմբերի 10-ի ժամը՝ 00:00-ի: Դրանում միայն նշվել էր (պատահական) ռազմական շփման գիծը, բայց ոչ տարածքի (մշտական) վարչական սահմանը: Հետևաբար, ՄԱԿ ՓԳՀ-ի վերահսկողության ներքո ներքին տեղահանված անձանց վերադարձի կազմակերպման ու իրականացման հետ մեկտեղ իրավական հրատապ խնդիր են Հաղորդի և Շուշիի շրջանների վարչական մարմինների վերականգնումն ու դրանց ֆունկցիոնալության ապահովումը:

Այնուամենայնիվ, կարելի է ոչ միայն ենթադրել, այլև լիովին ակնկալել, որ Ադրբեյջանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի հարավը օկուպացրած նրա զինված ուժերը կհակառակվեն Հաղորդի և Շուշիի շրջանների վարչական մարմինների վերականգնմանը: Ինչպես նշվեց, այդ դիմադրությունն անօրինական կլինի, քանի որ այն կխախտի Լեռնային Ղարաբաղի (Արցախի) ժամանակավոր կարգավիճակը, որն օրինականացված է միջազգային իրավունքով: Այն կարելի է հաղթահարել միայն Մինսկի խմբի համաձայնագրերի կիրականացման, մասնավորապես, Ռուսաստանի վճռական համատեղ միջամտության շնորհիվ: Հետևաբար, Հայաստանի և Արցախի կառավարությունների մեկ այլ հրատապ և միևնույն ժամանակ չափազանց կարևոր խնդիրն է նախ համապատասխան պահանջներ ներկայացնել համաձայնագրերին և, մասնավորապես, Ռուսաստանին, և երկրորդ՝ ներգրավել ԱՄՆ-ին, Ֆրանսիային և Ռուսաստանին, ինչպես նաև ՄԱԿ-ին՝ որպես ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գլխավոր կազմակերպություն՝ իրավական այս լիովին օրինական պահանջների իրականացման համար Ադրբեյջանի նկատմամբ քաղաքական հարկադրանքի համար:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

VI
 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի համաձայնագրում ոչինչ չի ասվում Մինսկի խմբի մասին, որը գործում է ԵԱՀԿ-ի և նրա համանախագահների՝ Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի անունից: Փոխարենը, Ռուսաստանը բացառապես լիազորված է վերահսկել և երաշխավորել հրադադարը խաղաղարար ուժերի օգնությամբ, որոնց թիվը սահմանվում է համաձայնագրի 3-րդ կետով: Այդուհանդերձ, Ադրբեջանի նախագահ Ալիևի և Չայաստանի վարչապետ Փաշինյանի միջև միջնորդությունից հետո նախագահ Պուտինը չի հավակնում Ռուսաստանի իրավունքին՝ ստանձնել ապագայում դարաբաշխյան հակամարտության լուծման բացառիկ պատասխանատվությունը ԵԱՀԿ-ի փոխարեն և առանց Մինսկի խմբի: Ընդհակառակը, հրադադարի համաձայնագրի ստորագրման կապակցությամբ նախագահ Պուտինը հայտնեց իր ակնկալիքն ու հույսը, որ Մինսկի խումբը կշարունակի մասնակցել հակամարտության կարգավորման գործընթացին: Համանախագահներ Ֆրանսիան և ԱՄՆ-ն արտահայտվեցին նույն ոգով:

Այնուամենայնիվ, նախորդ հայտարարություններից պարզ դարձավ, որ Ադրբեջանի ռազմական հաղթանակից և Բաքվի կողմից Լեռնային Ղարաբաղի շուրջ գտնվող բոլոր յոթ շրջանների վերադարձից հետո, որոնք վերահսկվում են հայկական ուժերի կողմից 1994-ի հրադադարից հետո, այժմ անկասկած ավելի դժվար կլինի ԵԱՀԿ-ի և Ռուսաստանի համար՝ հանդուժել Ադրբեջանի կառավարությանը փոխզիջումների գնալ հայկական կողմին: Սա վերաբերում է կոնկրետ և հատկապես, ինչպես արդեն նշվեց, օրինական և իրավահանրեն հիմնավորված ուժերի կողմից, որոնք չպետք է խոչընդոտի Չայրուբի շրջան և Շուշի քաղաք հայ փախստականների վերադարձին, ինչպես նաև այս տարածաշրջաններում հայկական տեղական վարչակազմի վերականգնմանը:

Այս առումով հարց է ծագում, թե ինչ գործիքներ ունեն Մինսկի խմբի համանախագահները՝ ԵԱՀԿ-ի իրենց մանդատի հիման վրա, որպեսզի դրոն Ադրբեջանին ընդունել հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերը, որոնք համանախագահները համարում են ցանկալի, օգտակար և տեղին: Համանախագահների մանդատի վերադրությունը, որը հրապարակվել է 1995թ. մարտի 23-ին, հանգեցնում է այն եզրակացությանը, որ նրանք չունեն որևէ լիազորություն կամ գործիք՝ հակամարտության կողմերին այս կամ այն վարքը պարտադրելու համար: Նրանց միանախանակ արգելված է ուժ կիրառել: Համանախագահները սկզբունքորեն պարտավոր են գործել համատեղ և փոխադարձ համաձայնությամբ, այսինքն՝ Չայաստանի և Ադրբեջանի նկատմամբ հանդես գալ միասնական դիրքորոշմամբ և անել հնարավոր ամեն ինչ նրանց միջև մերձեցման և կոնցենսուսի ձևավորման խթանման համար:

Այնուամենայնիվ, հարկադրանքի և ուժի կիրառման արգելքը չի բացառում համանախագահների կողմից ավելի խիստ քաղաքական միջոցների կիրառումը՝ իրենց պահանջներին և առաջարկներին կշիռ տալու համար, որոնք նրանք արդարացված են համարում իրավական ու գործնական տեսանկյուններից և նպատակահարմար՝ հակամարտության կարգավորման շահերից ելնելով: Նման դեպք կարող է լինել փախստականների անարգել վերադարձը Ադրբեջանի կողմից վերահսկվող ԼՂԻՄ-ի տարածք, այն է՝ Հադրուբ, Տող, Ջրաբերդ, Մեծ Թաղեր և այլն, ինչպես նաև փախստականների վերադարձի հետ սերտորեն կապված տրամաբանական ու հետևողական պահանջը՝ չխոչընդոտել վարչակազմի վերականգնմանը, օրինակ՝ Հադրուբի շրջանում:

ԵԱՀԿ մանդատի հիմքում ընկած քաղաքական գաղափարը, այն է՝ Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական և իրավական լուծման խթանում, որը կլինի երկարաժամկետ և միևնույն ժամանակ կհամապատասխանի դարաբաղահայության օրինական ցանկությանը՝ օգտվել ազգային ինքնորոշման իրավունքից, պարտավորեցնում է Մինսկի խմբի համանախագահներին անել հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու ԼՂԻՄ-ի տարածքում

մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առկա պայմանների հիմնարար վերականգնում, մինչև որևէ հետագա քայլերի, առաջարկությունների ու միջոցառումների իրականացում:

Այնուամենայնիվ, կա համանախագահների այս բարոյաքաղաքական պարտավորության մեկ այլ՝ շատ ավելի լուրջ հիմնավորում, այն է, որ Ադրբեջանի Հանրապետությունը, հարձակվելով հայկական ուժերի վրա շփման գծի ողջ երկայնքով, որը գոյություն ուներ 1994 թվականից, մի շարք առումներով լրջորեն խախտեց միջազգային իրավունքով սահմանված դե ֆակտո պետության հիմնարար սկզբունքները: Միջազգային իրավունքի խախտման փաստերն արդեն հայտնի են բոլորին: Հետևաբար, ես կսահմանափակվեմ կարճ ցուցակով. առաջին՝ Արցախի Հանրապետության վրա հարձակման միջոցով ուժի կիրառման ընդհանուր արգելքի խախտում, որը պաշտպանված է միջազգային իրավունքի՝ ուժի կիրառման արգելքով, թեև Արցախը ընդամենը դե ֆակտո պետություն է: Երկրորդ՝ ուժի կիրառման մասնավոր արգելքի խախտում, որը հիմնավորված է 1994 թվականի մայիսի 11-ի Բիշքեկի հրադադարի պայմանագրին հավատարիմ մնալու Ադրբեջանի պարտավորությամբ: Երրորդ՝ ուժի կիրառման ընդհանուր և մասնավոր արգելքի որակական խախտում այն փաստով, որ Ադրբեջանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի դեմ իր ագրեսիվ պատերազմը վարել է միջազգային իրավունքին հակառակ՝ թուրքալիայի աջակցությամբ: Չորրորդ՝ միջազգային հունամիտար իրավունքի զանգվածային խախտում մի քանի առումներով, մասնավորապես, քաղաքացիական օբյեկտների՝ տների, դպրոցների, մանկապարտեզների, հիվանդանոցների, խանութների և նույնիսկ եկեղեցիների նպատակային ոմբակոծություն, հատկապես այստեղ՝ Ստեփանակերտում, հատկապես կասետային ռումբերի զանգվածային կիրառմամբ, որոնք արգելված են միջազգային իրավունքով, որովհետև դրանց մահացու ազդեցությունը տարածվում է և քաղաքացիական, և՛ ոչ քաղաքացիական օբյեկտների վրա և ահաբեկում է ռազմական գործողություններին չմասնակցող խաղաղ բնակիչներին և հինգերորդ՝ քանի որ Ադրբեջանի զինված ուժերը թուրքալիայի օգնությամբ պատերազմի ժամանակ կիրառել են Սիրիայից բերված մեծ թվով իսլամիստ վարժականներ և կանխիկ դրամական պարգևավճարներ են վճարել հրոսակախմբերին քրիստոնյա հայերի սպանության համար:

Միջազգային իրավունքի և մարդու հիմնարար իրավունքների այս լրջագույն խախտումների պատճառով մասնավորապես արդարացի կլինեն փոխտեսուցում պահանջել Ադրբեջանի Հանրապետությունից: Արդար փոխտեսուցում կլինեն կենսապայմանների վերականգնումը, որոնք գոյություն ունեն ԼՂԻՄ-ի տարածքային սահմաններում ընկած Լեռնային Ղարաբաղում: Սա առաջին հերթին կնշանակի, որ փախստականները կկարողանան արագ և առանց խոչընդոտների վերադառնալ Լեռնային Ղարաբաղ: Երկրորդ, որ Արցախի կառավարությունը կվերականգնի լիակատար վերահսկողությունը Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքի վրա՝ ԼՂԻՄ-ի սահմաններում: Երրորդ, կվերականգնվեն Հադրուբի և Շուշիի շրջանների վարչական մարմինները, որոնք 2020 թվականի նոյեմբերի 10-ից գտնվում են Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ: Չորրորդ, որ ադրբեջանական զինված ուժերը ԼՂԻՄ-ի տարածքը թողնեն ԼՂԻՄ-ի գոտու սահմաններում, և որ ռուս խաղաղապահ ուժերը վերահսկողության տակ վերցնեն Արցախի այս հատվածը նույնպես:

Չայաստանն ու Արցախը պետք է գործադրեն բոլոր ջանքերը Մինսկի խմբի համանախագահներին հանդուժելու համար, որ ողջ Լեռնային Ղարաբաղի վարչակազմի և ենթակառուցվածքների ամբողջականությունը և գործունեությունը վերականգնվեն կղաճառ որոշիչ պայման Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված և միջազգային իրավունքին հակասող պատերազմից հետո Ղարաբաղյան հակամարտության արդարացի լուծման համար:

ԱՐՃԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԵՐՐՈՐԴ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՉԻՆ ԵՎԻՐԱԾ ՄԻՋԱՉՈՒՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

1. Լեռնային Ղարաբաղի հակամարտության միակ համապարփակ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների շրջանակում ԼՂՀ կարգավիճակի վերջնական որոշմամբ բանակցային գործընթացի վերսկսումն է՝ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրականացմամբ, ինչը թույլ կտա նրա կյանքը իր պատմական հայրենիքում դարձնել անվտանգ և միաժամանակ տարածաշրջանում կայունության վերականգնման երաշխիք կղաճառ:

2. Արցախի (ԼՂՀ) անկախության ճանաչումը («Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 1991թ.» սեպտեմբերի 2-ի հռչակագրի հիման վրա) համարել առաջնահերթ անհրաժեշտություն՝ որպես Հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգության և երկարատև խաղաղության պահպանման երաշխիք:

3. Կոչ ենք անում Հայաստանի կառավարությանը ճանաչել ԼՂՀ (Արցախի) անկախությունը (սովյալ սահմանների երկայնքով ռուս խաղաղապահ զորքերի հնարավոր տեղակայմամբ՝ հայ բնակչության անվտանգության ապահովման նպատակով) և ստորագրել Հայաստանի և ԼՂՀ (Արցախի) միջև համապատասխան տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցության համաձայնագիր:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՀԱՐԹԱԿ



Ստեփանակերտում Շառլ Ազնավուրի անունը կրող մշակույթի կենտրոն, պուրակում՝ հայ-ֆրանսիական բարեկամությունը խորհրդանշող հուշակոթող, հարևանությամբ՝ հայ ազգի և Ֆրանսիայի հպարտություն մեծ շանտոնյեի կիսանդրի, ԱՀ Ազգային ժողովում ստեղծված Հայ-ֆրանսիական բարեկամության խումբ, Արցախի և Ֆրանսիայի մի շարք քույր քաղաքներ ու բնակավայրեր: Իսկ այսօր էլ՝ «Պոլ Էյլուարի տուն Ֆրանկոֆոնիայի կենտրոն», որի պաշտոնական

բացումը սեպտեմբերի 16-ին էր: Միանշանակ սա խոսում է հայ-ֆրանսիական սերտ կապի, երկու ժողովուրդների քաղաքակրթական չափանիշների մասին:

Կենտրոնի բացման արարողությանը ներկա էին հյուրեր Ֆրանսիայից, Բելգիայից, Հոլանդիայից և Հայաստանից: Արարողությունը սկսվեց դրոշմների բարձրացումով:

ԱՀ պետական դրոշի բարձրացման պատիվը տրվել է ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանին, Ֆրանսիայի դրոշինը՝ «Ֆրանսիա-Արցախ բարեկամության շրջանակ»-ի նախագահ, Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսուա Պուպոնին, իսկ Ֆրանկոֆոնիայի դրոշինը՝ «Ֆրանկոֆոնիան Արցախում» միության նախագահ, նախկին պատգամավոր Ֆրանսուա Ռոշը-Լուանին:

Լ. Ղարախանյանը և Ֆրանսուա Ռոշը-Լուանը բարձրացնում են սպիտակ սավանդ քարե ցուցավահանակի վրայից, որի վրա արձանագրված են Կենտրոնի ստեղծման աջակիցների անունները՝ ԱՀ կառավարություն, ֆրանսիական կազմակերպություններ, անհատներ: Ելույթ ունենալով՝ Լ. Ղարախանյանն ասաց.

«Արդեն մեկ տարուց ավելի է, ինչ թերևս ինձ համար թանկ շփումներ են հաստատել մեծ արժեքներ կրող մի խումբ ֆրանսիացիների հետ, որով, ըստ էության, զգում եմ նաև Ֆրանսիան և ֆրանսիական մշակույթը:

44-օրյա պատերազմի ընթացքում և հետո այդ հարաբերությունները որակական նոր փուլ մտան, ինչի արդյունքում «Պոլ Էյլուար ֆրանկոֆոնիայի կենտրոն»-ի գործունեությունը կյանքի կոչվեց, և ֆրանսիական խոսքն ու բարձրաճաշակ մշակույթը հանգրվանեցին Արցախի սրտում:

Կենտրոնն արդեն 7 տարի է, ինչ աշխատանքներ է տանում ֆրանսերենի զարգացման ու տարածման ուղղությամբ: Այն այսօր ունի բոլոր նպատակավոր պայմանները՝ դառնալու ոչ միայն մշակույթի և կրթության, այլ նաև այլ ոլորտների գործունյա անհատականությունների հավաքատեղի: Ֆրանսերենի ամրագրումն արդեն իրողություն է, իսկ ֆրանսիական համընդհանուր արժեքները կամրապնդվեն կենտրոնի տարբեր միջոցառումների շրջանակներում: Այստեղ արդեն ֆրանսիական մշակույթի ձևավորված միջավայր կա: Թերևս դրա մասին են վկայում ոչ միայն ֆրանսերենի դասընթացները ֆրանսասերների համար, այլև ֆրանսիական արվեստագետներին նվիրված դասախոսություններն ու բաց դասերը:

Մինչև հիմա տպավորված են ֆրանկոֆոնիայի 2017 թվականի «Ապրել միասին» կարգախոսով: Տպավորված են ֆրանսիական ժողովրդի՝ հայերիս նկատմամբ արտահայտված ապրումնական, ենթաֆրանսի զգացման խորությամբ, որն ինձ ժամանակ առ ժամանակ հիշեցնում է 1915 թվականին Ֆրանսիա բռնազաղթածների նկատմամբ տարված քաղաքականությունը: Ֆրանկոֆոնիայի արժեքների հանրահռչակումն ու մերձեցումը հայ մշակույթին ավելի կամրապնդեն մեր կապերն ու հարաբերությունները, արցախահայերի ու ֆրանսիացիների անբասիր բարեկամությունը: Պոլ Էյլուար, այո, հենց Պոլ Էյլուար՝ զենք ու գրիչ կրողը: Մենք դատապարտված ենք ապրել այնպիսի հարևանների կողքին, որ գրչի հետ նաև զենք պետք է կրենք: Պոլ Էյլուարը միմիայն պոետիկ մտքեր, հույզեր ու զգացումներն էր, որ կհաղորդի մեզ, այն կբազմապատկի մեր հարատևելու կամքի ուժը:

Փառք նրբագեղ ու մարդասեր Ֆրանսիային, շնորհակալ ենք, որ մեզ հետ եք: «Պոլ Էյլուարի տուն-ֆրանկոֆոնիայի կենտրոն» հիմնադրամի գործունեության հիմնական նպատակը Ֆրանսիայի հետ կրթական և մշակութային կապեր հաստատելն է, ինքնակրթվելու, մշակութային գիտելիքները զարգացնելու, նոր փորձեր, գաղափարներ ձեռք բերելու՝ երիտասարդների համար հարթակ ապահովելը: Կենտրոնում գործում են IT դպրոց, մեդիաթեք՝ ֆրանսերեն լեզվի դասընթացների համար, միջոցառումների անցկացման սրահ: Ի դեպ, Կենտրոնն իր դռները բացել է այս տարվա հուլիսին՝ «Sunrise-Ստեփանակերտ» մշակութային փառատոնի շրջանակում: Այստեղ պարբերաբար միջոցառումներ են կազմակերպվում:

Ինչպես ասաց Կենտրոնի գործադիր տնօրեն Ժյուրյո Գերգերյանը, ֆրանկոֆոնիայի կենտրոնը հիմնադրվել է մասնագիտական շրջանակներն իրար կապելու, բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են իրենց գիտելիքները խորացնել՝ ֆրանսերեն սովորելու, հետազայում Ֆրանսիա գնալու և գիտելիքներ ստանալու: Ի դեպ, Արցախից մի շարք բժիշկներ այս ճանապարհով վերապատրաստվել են Ֆրանսիայում: Ֆրանսերեն սովորելու միջոցով Ֆրանսիայում գործնական գիտելիքներ ստանալու հնարավորություն ունեն բոլոր ոլորտների մասնագետները:

Սեֆ. Լրատվություն

ՀՈԳԵՎՈՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՉԱՅՆ` ՀԱՆՈՒՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԻ, ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԱՂՊԱՆՈՒԹՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհաբանի հանդիսությունների սրահում, օրինությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և նախածեռնությամբ Մայր Աթոռի Քարոզական կենտրոնի ու Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանման հանձնախմբի, սեպտեմբերի 9-10-ը անցկացվեց «Միջազգային կրոնական ազատություն և խաղաղություն» խորագրով երկօրյա միջազգային համաժողով:



Կաթողիկոսական նստավայրում հավաքվել էին եկեղեցիների, միջազգային կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ և մասնագետներ՝ քննարկելու համաշխարհային հոգևոր-մշակութային և պատմական ժառանգության պահպանության հարցը, ինչպես նաև մշակելու ամբողջ աշխարհում կրոնական ազատության և մշակութային ժառանգության պահպանման վերաբերյալ առաջարկություններ, որոնք կարող են լայնորեն կիրառվել հետագայում: Կոնֆերանսի սկզբում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով հանձնախմբի ատենապետ Գերաշնորհ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Ալթազյանը ներկայացրեց հրավիրեց մեկ րոպե լուծարման հարցը արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակը: Այնուհետև համաժողովի մասնակիցներին իր պատգամն ու օրինությունը փոխանցեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այսի մշակութային կոթողների ավերածություններ տեղի ունեցան Աֆղանստանում, Իրաքում, Սիրիայում, Եգիպտոսում և այլուր: Այս առումով խիստ անհրաժեշտ են միջազգային համարության և համապատասխան կազմակերպությունների միահանուր ջանքերը՝ կանխելու մշակութային եղեռնը, ապահովելու կրոնական և մշակութային հուշարձանների պահպանությունը, հրամայական է Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագիտական առաքելության կողմից հայկական մշակութային ժառանգության վիճակի գնահատումը, որին ամեն կերպ խոչընդոտում է Ադրբեջանը, մասնավորապես ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Վեհափառ հայրապետին և համաժողովի

նության համար: Այս համաժողովի խնդիրներից մեկն է գտնել, թե ինչպես դա արտացոլել միջազգային իրավունքի մեջ, ինչպես կարող ենք հարգել միջազգային իրավունքը, որպես կրոնական կազմակերպություն ինչպես ուժեղացնենք իրավունքը՝ ամրացնելու հոգևոր հուշարձանների պահպանության ուղղված ջանքերը: Կրոնի ազատությունն ու խաղաղությունը կարևոր բաղադրիչներ են: Մեկտեղում հավաքվելով՝ քննարկում ենք, թե ինչպես միասին նպաստենք մեծագույն մարդկային արժեքների պահպանությանը: (Իրհան ՍԱՌԿԱ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ):

- Հռոմի Ֆրանցիսկոս պապի ողջույններն են բերել: Համաժողովի ձևաչափը շատ կարևոր է. ամեն անգամ հավաքվելու հնարավորություն ունենալով՝ կարողանում ենք առաջ գնալու քայլեր ձեռնարկել: Երկխոսությունը կարևոր է կյանքի բոլոր հանգամանքներում, բայց հատկապես՝ հակամարտությունների ժամանակ: Դրա համար էլ, չնայած համավարակի հարուցած խոչընդոտներին, հավաքվել ենք այստեղ: Մի քանի օր առաջ պապական առաքելական նվիրակություն է հաստատվել Երևանում: Սա մեր կողմից շատ կոնկրետ ազդանշան է աշխարհի երկրներին և կրոնական միջազգային կառույցներին, որ պետք է ուշադրություն դարձնել Հայաստանին և այն հարցերին, որ Հայաստանն ուղղում է աշխարհին: (Արքեպիսկոպոս **ժոզ Լ ԲԵՏՏԵՆԿՈՒՐ**, Հայաստանում առաքելական նվիրակ):

Օրենքի տեսակետից ուսման հարված են նաև հայ հավատացյալների կրոնական իրավունքներն ու ազատությունները, որոնք զրկված են սրբավայրեր այցելելու հնարավորությունից:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը, իր խոսքում անդրադարձնելով կրոնի, խղճի և մտքի ազատության արդի հիմնահարցերին, նաև ձեռք բերված փաստերի հիման վրա արձանագրեց, որ պարբերաբար ուսման հարված են արցախյան վերջին պատերազմի հետևանքով ադրբեջանական զեղրության մեջ հայտնված հայ ռազմագերիների իրավունքներն ու կրոնական զգացումները, ինչպես նաև շարունակաբար ունեցվողներն են կատարվում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հոգևոր և մշակութային ժառանգության նկատմամբ: Մարդու իրավունքների պաշտպանը Ադրբեջանի որդեգրած մնացած վարքագիծը որակեց իբրև ցեղասպան քաղաքականություն:

Ա. Թաթոյանը նաև մեծապես կարևորեց Հայ Եկեղեցու և քրիստոնեական միջազգային կառույցների դերակատարությունն ինչպես մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ հոգևոր-մշակութային արժեքների պահպանության գործում:

Համաժողովին մասնակցում էր պատվիրակություն Արցախից:

Վրթանես Եսայիկյան ԱՐՐԱՀԱՍՅԱՆ, ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ.

- Ազատությունը և խաղաղությունը կարծես հայի ինքնությունն են բնորոշում. չկա մի հայ, որ չցանկանա խաղաղություն, չկա մի հայ, որ չցանկանա ազատ ապրել: Եվ հայ հոգևորականի ամբողջ աղոթքը խաղաղության խնդրանք է Աստծուց: Այսպիսի համաժողովներով պետք է նվիրակվեն մոտեցում ցույց տանք մեր առաքելությանը: Որպես քրիստոնյա ազգ՝ մենք արարում ու ստեղծագործում ենք, բայց այդ ամենը մեզմիջ խլում են, փչացնում, սրբապաշտում: Որպեսզի դա կարողանանք պահել և պահպանել, անշուշտ, մենք պիտի հենվենք մեր սեփական ուժերի վրա, կարողանանք կառուցել մեր պե-

տականությունը՝ գիտակցելով, որ Աստծո կողմից տրված այս հողի վրա մենք ենք տերը և մենք պետք է պահենք այն: Ինչ ծրագրերով, ինչ հզորությամբ, ինչ մտադրությամբ՝ մեզմիջ է կախված: Եթե մենք կարողանանք միավորված կերպով այդ ցանկությունը կյանքի կոչել, ուրիշ ազգեր, ուրիշ պետություններ, քրիստոնյա աշխարհը մեզ կաջակցի և մեր կողքին կկանգնեն:

Դավիթ ՔԱՐԱՅԱՆ, ԱՀ արտաքին գործերի նախարար.

- Կրոնական երկխոսությունը շատ կարևոր է, այդ թվում նաև հակամարտությունների կարգավորման գործում, որովհետև թույլ է տալիս ջարդել կարծրաստիները: Փոխշփման միջոցով հնարավորություն է ստեղծվում ի վերջո ճշմարտությունը ներկայացնել աշխարհին: Հայ Առաքելական եկեղեցին Վեհափառի գլխավորությամբ մեծ աշխատանք է տարել այս ուղղությամբ և ոչ միայն, հատուկ ուշադրության կենտրոնում է պահում Արցախը: Եվ սա արժանի է ամենաբարձր գնահատանքի:

Գեղամ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԱՀ մարդու իրավունքների պաշտպան.

- Ես խոսել եմ ադրբեջանական վանդալիզմի մասին՝ կոնկրետ ներկայացնելով մի քանի դեպք, ինչպիսին Շուշիի Սբ. Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու թիրախավորումն էր և Մեխակալանի եկեղեցու անհետացումը: Ահազանգել եմ, որ եթե միջազգային հանրությունը շարունակի նման վարքագիծ դրսևորել այս շատ կարևոր հարցի վերաբերյալ, ապա շատ կարճ ժամանակահատվածում Ադրբեջանը հայկական բոլոր եկեղեցիներից, պատմական, հոգևոր-մշակութային հուշարձաններից ջնջելու է հայալեզու արձանագրությունները, և պատմությանն է փոխանցվելու լրիվ խեղաթյուրված իրողություն: Սա ամենապարզ ապացույցն ու վկայությունն է, թե ինչպես է վերաբերվում Ադրբեջանը առհասարակ հոգևոր իրավունքներին և ազատություններին: Չնայած ձեռք բերված պայմանավորվածությանը, հայ ուխտավորները չեն կարողանում մուտք գործել Դաղվանք: Եվ սա նաև այն ցուցիչն է, որը պետք է ազդակ լինի թե՛ միջազգային հանրության համար և թե՛ տարբեր կրոնական կազմակերպությունների, ավելացնելու համար Ադրբեջանի նկատմամբ ճնշումը: Ադրբեջանը ցույց տվեց, որ ինքը քաղաքակիրթ ճանապարհը չի հասկանում, և նրան պետք է ճնշելու ճանապարհով ստիպել՝ հետ կանգնել վանդալիզմի իր քաղաքականությունից: Ամեն մի միջոցառում պետք է հենց այս նպատակին ուղղված լինի՝ անընդհատ ավելացնելու Ադրբեջանի նկատմամբ ճնշումը:

Երկօրյա համաժողովի ընթացքում ելույթներն ու քննարկումները շարունակվել են: Յուրաքանչյուր քննարկմանը մանրամասնորեն ներկայացվեց գրավյալ տարածքներում գտնվող Արցախի հայկական ժառանգությունը՝ լուսանկարներով, ամրագրված փաստերով: Համաժողովի հիմնական նպատակներից էր միջազգային հարթակում ստեղծել կապեր կազմակերպությունների և անհատների միջև, տրամադրել Արցախի մասին հավաքված մեծ նյութը հետագա քայլերի ու անելիքների համար:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի տպավորությամբ՝ սա Արցախի հոգևոր-մշակութային ժառանգությունը փրկելու նոր նախածեռնություն է: Նա համոզմունք հայտնեց, որ համաժողովում ընդունված հայտարարությունը կաստի Ադրբեջանին, որը երկու մակարդակներով՝ հակահայկական և հայկականությունը՝ քրիստոնեական ներկայությունը ոչնչացնելու քաղաքականություն է վարում՝ աղվանացնելու և ֆիզիկապես ոչնչացնելու:

Արթուրը՝ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգ

«Առանց ազատության և խաղաղության գաղափարների վերաբերյալ կրոնական ընթերցումի հնարավոր չէ հասնել մարդկային ազատությունների ու իրավունքների ճշգրիտ ընկալմանն ու իրացմանը»: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ բոլոր այն ցավալի իրողություններին, որ առաջացել են պատերազմական և հետպատերազմյան շրջանում և իր գնահատանքը հայտնեց միջազգային մարդասիրական, եկեղեցական ու միջեկեղեցական բոլոր հաստատություններին ու կազմակերպություններին, որոնք այսօր աշխատանքներ են տանում հայ ռազմագերիների ազատ արձակման և կրոնական-մշակութային արժեքների պահպանության ուղղությամբ:

- Պատերազմի օրերին սրբավայրերի ռմբակոծությունը և ավերումը, ինչի դրսևորումը եղավ նաև պատերազմից հետո, վկայում են Արցախից հայկական հետքը ջնջելու Ադրբեջանի քաղաքականության մասին, ինչպես որ 2003թ. հիմնապես ոչնչացվեցին Ջուղայի հայկական գերեզմանոցի ավելի քան վեց հազար խաչքարեր, և տարածքը վերածվեց հրաձգարանի:

Դեռևս թարմ են հիշողությունները, թե պատերազմական գործողությունների հետևանքով վերջին տասնամյակներին ինչ-

մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկան քրիստոնեական եկեղեցիների և եկեղեցական կառույցների ներկայացուցիչները: Նրանք արձագանքել են Սուրբ Էջմիածնի կոչին՝ ձայն բարձրացնելու հանուն սրբավայրերի և հոգևոր-մշակութային հուշարձանների պահպանության:

Ադրբեջանի տիրապետության տակ անցած Արցախյան տարածքներում պղծման և ֆիզիկական ոչնչացման են դատապարտված հարյուրավոր պաշտամունքային վայրեր:

- Բոլոր եկեղեցիները և կրոնները կապակցված են և պետք է համերաշխ լինեն, ուսուսի տված՝ մեկս բոլորի համար, բոլորը՝ մեկի: Եվրոպական եկեղեցիների համաժողովը ներկայումս եվրահամաժողովի մանդատով մշակում է ծրագիր, որը կարող է կոչվել սրբավայրերի պահպանության ծրագիր: Մենք կարող ենք հայ եկեղեցուն աջակցություն ցուցաբերել՝ ժամոթացնելով այդ ծրագրին: Աջակցության մի տեսակ է նաև այն, որ կարող ենք Եվրոպայի մարդկանց ուշադրությունը կենտրոնացնել Արցախի իրավիճակին: Մենք կարող ենք նաև, հաշվի առնելով մեր կապերը Եվրոպացի քաղաքական գործիչների հետ, կապեր ստեղծել նաև հանուն ձեր շահերի պաշտպանության: (Քրիստիան **ՔՐԻՂԵՐ**, Եվրոպական եկեղեցիների համաժողովի նախագահ):

- Շատ ուրախ ենք այստեղ գտնվել և մեր աջակցությունը հայտնել հայ եկեղեցուն ու ժողովրդին: Հայ և ասորի ժողովուրդները միշտ բարեկամներ են եղել դժվարին և վճռորոշ ժամանակներում: (Արքեպիսկոպոս **Ջորջ ԶՈՒՐԻԵ**, ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարքի ներկայացուցիչ):

- Կարևոր էր այստեղ հավաքվել մեզ բոլորի վերաբերող խնդիրների լուծումները գտնելու համար: Հոգևոր հուշարձանները հատկապես կարևոր են ժողովուրդների ինք-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԱՅ ԿԳՄՍ նախարար Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ելույթը համաժողովում

- Վեհափառ Տեր Գիտաժողովի մեծահարգ մասնակիցներ Ողջունելով բոլորիդ՝ միաժամանակ ուզում եմ երախտագիտության խոսքս հղել ներկա ժամանակներում մեծ հրատապություն ներկայացնող Արցախի Հանրապետության պատմամշակութային ժառանգության վերաբերյալ սույն քննարկումը կազմակերպելու կապակցությամբ: Լիախոյս եմ, որ համատեղ ուժերով ի գործ կլինենք մեր պատմամշակութային ժառանգության նկատմամբ իրականացված և շարունակաբար իրականացվող վանդալիզմի մասին վկայող փաստարկները հնարավորինս սեղմ ժամկետներում համակարգված ներկայացնել ինչպես հանրության դատին, այնպես և միջազգային համապատասխան կառույցներին, որպեսզի ի վերջո գործնական միջոցներ ձեռնարկվեն այն կամխելու ուղղությամբ:



Նախ, հարկ ենք համարում ընդգծել. Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, թեկուզև ավանդաբար իրականացվող, բայց վերջին հայտնի քաղաքական իրադարձություններից հետո մեծ մասշտաբներ ստացած հայկական ծագման քրիստոնեական արժեքների մի կողմից յուրացման՝ դրանք հատկապես աղվանական հայտարարելու և սեփականելու միջոցով, մյուս կողմից՝ ուղղակի ոչնչացման հստակ ձեռնարկները անվերապահորեն միտված են իրենց որդեգրած և արդեն իսկ միջազգային հնչողություն ստացած հանրահայտ քաղաքական ծրագրերի իրականացմանը: Այդ ամենի արդյունքում քաղաքակիրթ կոչված 21-րդ դարում՝ համաշխարհային քաղաքակրթության արժեքների պահպանման ու պաշտպանության առաքելությամբ և այդ նպատակներին միտված, հստակ ու, թվում է՝ կայացած, ծրագրերով ու պայմանագրերով կյանքի կոչված միջազգային կազմակերպությունների գիտությամբ ու թողստությամբ այս օրերին պարզապես իսպառ ոչնչացման վտանգի առաջ են կանգնած դարեր շարունակ տարաբնույթ արհավիրքներից դիմակայած, Հայ Առաքելական եկեղեցու անբաժան մաս կազմած Հայ Աղվանից եկեղեցու հոգևոր կենտրոններն ու տարատեսակ քրիստոնեա-հենք կառույցները: Փաստերը բազմաթիվ են:

Ընդգծենք, որ պատերազմ անձնագրերով Արցախի Հանրապետության դեմ՝ այն ամբողջությամբ նվաճելու նպատակով, Ադրբեջանը սկզբից ևեթ հիմնական թիրախային ուղղություն էր դարձրել նաև մեր ազգային քրիստոնեական մշակութային կոթողները՝ գերծանակակից հզոր ռուսներով պայթեցնելով դրանք: Այդ անհավանական չվիրիպեց մշակութային ժառանգության պահպանմամբ մտահոգ կազմակերպությունների ու լրատվամիջոցների ուշադրությունից, և միջազգային ամենատարբեր հարթակներում տեղի ունեցած քննարկումներն ու սուր քննադատությանն առաջ երկրի և նրա ղեկավարի հասցեին: Վերջինս, հանդես գալով որպես այսպես կոչված քաղաքակիրթ երկրի ղեկավար, այնուամենայնիվ, արդարապես փորձեր կատարեց՝ տեղի ունեցածը մեկնաբանելով որպես պատահականություն: Սակայն հետպատերազմյան շրջանում հայկական մշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող և օրըստօրե անմխաղաչ ծավալներ ու թափ առնող վանդալիզմը փաստում են ծրագրված պետական եղեռնագործ քաղաքականության մասին:

Պետական մակարդակով ակնհայտորեն իրականացվող պատմական հուշարձանների ոչնչացումն ունի հստակ իրավական ձևակերպում՝ մշակութային եղեռն: Այն այսօր Ադրբեջանը իրականացնում է բացահայտ՝ անտեսելով միջազգային բոլոր օրենքները, այն օրենքները, որոնք կյանքի են կոչվել համաարդկային ժառանգության պահպանման առաքելությամբ և որոնք ընդունվել ու վավերացվել են նաև հենց իր՝ Ադրբեջանի կողմից: Այն ոճրագործությունները, որոնք ներկա ժամանակներում էլ շարունակաբար կատարվում են Արցախի հիմնավոր հայկական հոգևոր-մշակութային կենտրոն Շուշիում

Ադրբեջանի իշխանությունների անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ, հստակ նպատակ ունենալով վերացնել հայկական հետքը, սպանել հայոց բերդաքաղաքի ֆեռմները, այդ իսկ երկրի համար հավերժ կմնան որպես բարբարոսության ու նախատինքի խարան, որպես հակաքաղաքակրթական, հետադիմական ակտ ու վայրենի վարքի դրսևորում:

Ոչ միայն Արցախի, այլև համայն հայության համար մեծ կարևորություն ներկայաց-

նող հոգևոր կենտրոն Շուշիի մշակութային բարձրարժեք կոթողների, այդ թվում՝ Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ Մայր տաճարի նկատմամբ, կեղծ վերականգնման պատրվակով, իրականացվող վանդալիզմը կամխելու ակնկալիքով կոչ ենք հղել համամարդկային քաղաքակրթության ճակատագրով մտահոգ միջազգային իրավասու կազմակերպություններին՝ գործնական քայլեր ձեռնարկել և հնարավոր բոլոր միջոցներով կամխել Ադրբեջանի հանրապետության նախագահի մակարդակով հրահանգված ու մեր հայրենիքի գերյալ հատվածում նոր թափով մեկնարկված մշակութային ցեղասպանությունը: Ընդ որում, վանդալիզմի, իսկ մյուս կողմից նաև մեր ազգային մշակույթի յուրացման փաստերն, անշուշտ, համատարած կիրառվում են Արցախի Հանրապետության բռնազավթված բոլոր տարածքներում: Այսպես, Տիգրանա-կերտի հնավայրն են հայտարարում որպես թե իրենց պատմամշակութային ժառանգություն, Դաղիվանքն ու Ծիծեռնավանքը, Տոդի Ս.Հովհաննես եկեղեցին ու մյուսներն են, մեղմ սասծ, ոչ հայկական հայտարարում և ադրբեջաներեն այսպես սասծ «աղոթքներ» հնչեցնում:

Մի քանի խոսք նաև թանգարանային պատմամշակութային ժառանգության վերաբերյալ:

Պատերազմը սկսվեց միանգամայն հանկարծակի և անսպասելի, որի հետևանքով մենք ունեցանք թե՛ շարժական, թե՛ անշարժ մշակութային ժառանգության ահեղի կորուստներ: Խոստովանենք, որ պատերազմի ընթացքն ու հետևանքները նույնպես բոլորիս համար անակնկալներով էին լեցուն՝ ամենաբացասական իմաստով:

Թշնամու կողմից իրականացված անմախաղեպ ու չափազանց ինտենսիվ հրետակոծությունն ու հրթիռակոծությունը ինչ-որ տեղ խուճապ էին առաջացրել բոլորիս մոտ, սակայն հայրենի տարածքները կորցնելու առումով թերևս կասկած անգամ չունեինք: Հենց այս հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ ԱՅ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմը և ենթակա հաստատությունները բավարարվեցին սոսկ շարժական հուշարձանները համապատասխան ռազմապատարաններում տեղակայելով: Սակայն ռազմաքաղաքական իրադարձությունները միանգամայն շրջադարձային ու անսպասելի ընթացք ստացան, և, դժբախտաբար, ունեցանք ցավալի կորուստներ:

Պատերազմի ամենաթեժ օրերին, անշուշտ, նաև որոշակի քայլեր ենք ձեռնարկել մշակութային ժառանգությունն ապահով վայրեր տեղափոխելու ուղղությամբ և այս կապակցությամբ էլ ուզում ենք մեր երախտագիտությունը հայտնել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ ցուցաբերած օժանդակության ու պատմամշակութային ժառանգության որոշ

մասի տեղափոխությունը կազմակերպելու առնչությամբ:

Պատերազմի ավարտից հետո ԱՅ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքում կազմվել է Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում մնացած պատմամշակութային ժառանգության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Ձեր թույլատրությամբ համառոտ ներկայացնենք այն.

- պատմամշակութային և պատմա-ճարտարապետական հուշարձաններ՝ մոտ 2000, այդ թվում՝ 13 վանական համալիր (Ղազանչեցոց, Կանաչ ժամ, Դաղիվանք, Ս.Կարապետի վանական համալիր Քնարավանի մոտ 12-13-րդ դդ., Հանդաբերդի վանք՝ 9-14-րդ դդ., Ծիծեռնավանք, Գուշավանք, Տոդի Ս.Հովհաննես եկեղեցի, Կատոսավանք, 122 եկեղեցի, 52 ամրոց, 536 խաչքար և 4 մատուռ):
- 127 դպրոցական գրադարան՝ 617000 գրքային ֆոնդով.
- 3 շրջանային գրադարան՝ 68398 գրքային ֆոնդով.
- 10 պետական և 2 մասնավոր թանգարաններ, որոնց հիմնական և գիտաօժանդակ ֆոնդերում պահպանվում էր 20345 ցուցանմուշ, այդ թվում.

1. «Հաղորթի Ա. Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան» ՊՈԱԿ - 7680:
2. «Մեծ Թաղերի Ա. Խանախչյանի անվան թանգարան» մասնաճյուղ - 2195:
3. «Տունու Թևան Ստեփանյանի անվան թանգարան»- մասնաճյուղ - 50:
4. «Շուշի քաղաքի պատմության թանգարան» - 5000:
5. «Պրոֆ. Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարան» - 403:
6. «Կերպարվեստի պետական թանգարան» - 673:
7. «Շուշիի պատկերասրահ» - 105:
8. «Տոդի Մելիքական ապարանք» - 82 ցուցանմուշ:
9. «Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ - 3297 գիտաօժանդակ ֆոնդի ցուցանմուշներ:
10. Շուշիի գորգերի թանգարան - 860:
11. Շուշիի հայկական դրամի թանգարան - 700:

12. Տիգրանակերտի պատմահնագիտական պետական արգելոց թանգարան:

Ընդհանրացված ընդգծենք, որ բացառությամբ Տիգրանակերտի և Քաշաթաղի թանգարանների և մասամբ Շուշիի գորգերի թանգարանի պատմամշակութային արժեքների, մնացածը տարաբախտաբար մնացել է թշնամու վերահսկողության տակ: Տիգրանակերտի պատմահնագիտական թանգարանի հավաքածուն ամբողջությամբ տարհանվել է, Քաշաթաղի թանգարանի հիմնական ֆոնդը նույնպես տարհանվել է, սակայն տեղում մնացել են գիտաօժանդակ ֆոնդի նմուշները:

Շուշիում մնացած թանգարանային պատմամշակութային արժեքների թվում են նաև կերպարվեստի թանգարանում ժամանակավոր ցուցադրության մեջ գտնվող ժակլին Սարգսյանի 30 աշխատանքները, ինչպես նաև Սարգիս Բաղդասարյանի 16 քանդակները:

ԱՅ ԿԳՄՍ նախարարության կողմից այսօր ամենատարբեր խողովակներով աշխատանքներ են տարվում՝ հավաքագրելու համապատասխան տեղեկատվություն թշնամու վերահսկողության տակ մնացած մեր պատմամշակութային ժառանգության նկատմամբ իրականացվող քաղաքակրթության վերաբերյալ: Ցավալիորեն պիտի ընդգծենք, որ առ ներկա պահը հավաքագրված տեղեկատվությունը փաստում է մեր մշակութային կոթողների նկատմամբ Ադրբեջանի բարբարոսական վերաբերմունքը:

Մարդկային քաղաքակրթության ներկա դարաշրջանում նորից ու նորից թուրք պետական ամենաբարձր մակարդակով շարունակում է պղծել, անարգել, ոչնչացնել հայկական եկեղեցիները, վանքերը, խաչքարերը, գերեզմանատները, բոլոր տեսակի սրբավայրերը: Արդեն իսկ հանրահայտ է, որ Ադրբեջա-

նի նախագահը անձամբ է հայտարարել ու հրահանգել ոչնչացնել առաջին հերթին մեր պատմամշակութային ժառանգության այն մասը, որ հստակորեն ընդգծում է իր իսկ ժագումը՝ հայկական արձանագրությունները:

Հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել նաև այն իրողությանը, որ 1991թ. ԱՅ անկախության հռչակումից և, մասնավոր, Ղարաբաղյան առաջին պատերազմից հետո, ընդհուպ մինչև 2020թ. չարաբաստիկ այս պատերազմը, բավական հետազոտական աշխատանքներ են իրականացվել ԱՅ ողջ տարածքով սփռված մշակութային ժառանգությունը միջազգային գործող չափորոշիչներին համապատասխան ուսումնասիրելու և անձնագրավորելու ուղղությամբ:

Բացի հանրահայտ Տիգրանակերտից, որի պեղումները սկսվել են 2005 թվականին, 2002 թվականից միջազգային և բազմադիցիպլինար գիտահետազոտական արշավախմբի կողմից հնէաբանական աշխատանքներ են իրականացվել Ազոխի քարանձավում, որի ուսումնասիրությունների հիման վրա գիրք է հրատարակվել անգլերեն լեզվով, պեղումներ են իրականացվել Քաշաթաղի շրջանի հարավային մասում գտնվող Կերենի դամբարանադաշտում, Միրիկի ամրոցում, Հանդաբերդում, Դաղիվանքում (Քարվանսառ), Շուշիում և բազմաթիվ այլ վայրերում, որոնք տարաբախտաբար այսօր բռնազավթված են: Եվ այդուհանդերձ, գիտական պատշաճ մակարդակով իրականացված ուսումնասիրությունների շնորհիվ կարող ենք հաստատել, որ Ադրբեջանի կողմից ներկայումս իրականացվող մշակութային եղեռնը ինքնաբերաբար փաստարկված է, և որևէ կերպ ձերբազատվելը պատասխանատվությունից կամ քողարկելը թերևս անհնարին կդառնա: Մեր կարծիքով անհրաժեշտ է մշակել համապատասխան համակարգված քաղաքականություն՝ այդ ամենը դե ֆակտո, դե յուրե ներկայացնելու համապատասխան կառույցներին՝ գործնական քայլերի ակնկալիքով:

Եզրակացնելով՝ նշենք. այո, ակնհայտ իրողություն է. որտեղ թուրքն է, այնտեղ հայի ոչ միայն գտնվելն է բացառված, այլև նրա մշակույթն է վտանգված:

Այո, վտանգված է մեր պատմամշակութային ժառանգության հետագա գոյությունը ստեղծված քաղաքական իրավիճակում, ինչն էլ պարտադրում է բոլորիս՝ համատեղել մեր ողջ հնարավորությունները միջազգային, ինչպես մշակութային, այնպես և իրավաքաղաքական կազմակերպությունների միջոցով պղծումից ու ոչնչացումից հնարավորինս փրկելու համամարդկային պատմական այդ ժառանգությունը:

Շնորհակալություն:

7.9. Ազգիքներ

Բուն Լեռնային Ղարաբաղի կամ նախկին ինքնավար մարզի տարածքում, որ իր մեջ էր ներառում հինգ շրջան՝ Հաղորթի, Մարտունու, Ասկերանի, Մարտակերտի և Շուշիի, մզկիթներ և մեդրեսեներ կան միմիայն Շուշի քաղաքում (14) և մոտակա Մալիբեկլու գյուղում (1)՝ 15 հատ: Այդ փաստը արձանագրված է Ադրբեջանի Հանրապետության կառավարության դեռևս 1988թ. ապրիլի 27-ի թիվ 145 որոշմամբ հաստատված և պետական պահպանության տակ առնված պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում: Ինչ վերաբերում է բուն Լեռնային Ղարաբաղի հարակից շրջանների մզկիթներին, դրանց թիվը հասնում է 12-ի, որոնք բաշխվում են հետևյալ կերպ. Քաշաթաղի (Լաչինի) շրջան-1, Քաշունիքի (Կուբաթլու) շրջան -2, Կովսականի (Ձանգելան) շրջան -1, Ջաբրայիլի շրջան-1, Ֆիզուլու շրջան-2, Ակնայի (Աղդամ) շրջան-6, որոնցից մեկը իջևանատուն՝ փոխակերպված մզկիթ: Ուշադրություն դարձնենք՝ Քարվանսառի (Քաշաթաղ) շուրջ 2000 քառ. կմ տարածքում մզկիթ ընդհանրապես գոյություն չունի: Եվ դա այն դեպքում, երբ այդ շրջանում առկա են շուրջ երեք տասնյակ վանքեր ու եկեղեցիներ: Այսպիսով, ընդհանուր առմամբ Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ առկա են 27 մզկիթներ:

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԶԱՐԵԶՆԵՐՈՒՄ

ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1918-1921ԹԹ.



Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ) Հանրապետության 30-ամյակին նվիրված գիտաժողովում հայտնի քարտեզագետ Ռուբեն Գալջյանը ներկայացրեց հայ-աղբեջանական սահմանային խնդիրները 1918-1921թթ.: Բանախոսը նախ ցուցադրեց տարբեր ժամանակների քարտեզներ, որոնց բնօրինակներն այլ երկրներում են: Հետաքրքիրն այն է, որ բոլոր այդ քարտեզները, որոնցում հիշատակվում է «Հայաստան» անունը, գծվել են ուրիշների կողմից, ոչ հայերի: Հայաստանի անունը նշվում է 2600 տարի առաջ: Նրա մասին առաջին փաստաթուղթը քարից է, 10-12 սմ-ոց կավե սալիկ է՝ պատրաստված Բաբելոնում: Դա աշխարհում ամենահին աշխարհացույց քարտեզն է: Մեջտեղում եփրատ գետն է, որը լեռներից իջնում է դեպի Պարսից ծոց և երեք երկրի անուն է գրված՝ Բաբելոն, Ասորեստան, Արարատի երկիր: Որոշներն Արարատի երկիրն անվանում են Ուրարտու, որոշները՝ Արարատ: Բայց դրանք նույն երկրներն են: Սեպագիր արձանագրություններում ձայնավորները չէին գրում, այսինքն՝ այս անունը գրվում էր ԱՐՐՏ, որը կարող են կարդալ և՛ Արարատ, և՛ Ուրարտու: Սալիկը բրիտանական թանգարանում է:

երկու ամիս անց Ստալինը, ներկայանալով Բաբելոն, որոշեց, որ դրանք պիտի պատկանեն Աղբեջանին: Եվ մենք կորցրինք այդ տարածքները՝ մնալով փոքրիկ շրջանի մեջ:


Խորհրդային ժամանակների քարտեզները ենթադրում են: Ահա Հայաստանը, ահա Ղարաբաղը, Նախիջևանը, նույնիսկ չեն թողել, որ միացած լինեն հայաբնակ այդ շրջանները, որ կապ չունենան իրար հետ:

Անդրադառնալով Հայաստանի և Աղբեջանի միջև այս օրերին հրատապ սահմանային խնդիրներին՝ քարտեզագետը լուսաբանումը սկսեց 1918 թվականից: Ի դեպ, այս հարցի առնչությամբ Ռ. Գալջյանը այս տարվա հունիսին ֆեյսբուքում բաց նամակ էր հղել ՀՀ վարչապետին՝ հուշելով, թե հարցի առնչությամբ ինչ քարտեզներ կարելի է վկայակոչել: Գիտաժողովում ներկայացրեց այդ փաստաթղթերը:

1918 թվականին Հայաստանի եւ Աղբեջանի միջեւ քարտեզներ գոյություն չունեին: Հայաստանի հսկողության տակ էին Քարվաճառն ու Լաչինը, Արեւելյան Չանգեզուրը եւ նույնիսկ Լեռնային Ղարաբաղի մի մասը: Այդ

հայկական հողային տարածքները՝ անհայտ պատճառներով մնացին Աղբեջանին:

Տարածքներն Աղբեջանին հանձնող եւ ապագայում Հայաստանի տարածքում աղբեջանական անկլավներ ստեղծողները բացահայտ նպատակ են ունեցել Հայաստանի կապը դեպի հարեւան երկրներ տեղադրել Աղբեջանի տարածքով անցնող մայրուղիներով, այսպիսով դրանց հսկողությունն ուղղակի հանձնելով Աղբեջանին: Հենց այս նպատակով անկլավները տեղադրված են Հայաստանի Վրաստանի եւ Իրանի հետ կապող ճանապարհների վրա, որ անցնում են անկլավների միջով, իսկ Սյունիքում Գորիս-Կապան ճանապարհը, ինչպես նաեւ Տավուշի շրջանում Իջեւանից Ոսկեպար եւ Նոյեմբերյան-Վրաստան ճանապարհը երկու անգամ հատում են սահմանը եւ անցնում Աղբեջանի տարածքով, ապա վերադառնում Հայաստան: Աղբեջանական այն տարածքները, որոնցով հատում-անցնում են Հայաստանի մայրուղիները, ընդհանրապես անմարդաբնակ են ու հիմնականում ոչ պիտանի, սա մեկ անգամ եւս փաստում է դրանց բուն նպատակը՝ հսկողության տակ ունենալ Հայաստանի մայրուղիները:




Extract from the local historian Hadji Mirza Karabaghi's History of Karabakh, dated 1844. The manuscript is kept in Azerbaijan Academy of Sciences. The text is in Persian and the underlined part says: *The first town to be built in Karabagh was the Fortress city of Bardaa, located on the river of Terter and three parsangs from the river Kura. In the past it was populated by Armenians and other nations.*

Հատված տեղացի պատմաբան Հաջի Միրզա Կարաբաղիի 1844-ի *Ղարաբաղի պատմությունը* ձեռագրից, որը գտնվում է Աղբեջանի Գիտությունների ակադեմիայում: Ընդգծված տեքստը, որը պարսկերեն է, կշռվում է հետևյալով:
Ղարաբաղում կառուցված առաջին քաղաքը Պարտավ բերդաքաղաքն էր, որը գտնվում է Քարթառ գետի վրա, Կուրից 3 փարսանգ հեռու: Քաղաքի բնակչությունն անցյալում հայեր էին և մի քանի այլ ժողովուրդներ:

Սովետական մեծ հանրագիտարանի 1926 թ. առաջին հատորում հրատարակված Հայաստանի, ինչպես նաեւ ՀԽՍՀ 1927 թ. մարդահամարին կից քարտեզներում Խորհրդային Հայաստանի արեւելյան եւ հյուսիսային սահմանները նույնը չեն, որ ընդունված են այսօր: Դրանց մեջ Աղբեջանին «նվիրված» հողամասերը, ներառյալ՝ Արծվաշենը, Ալ Լճերը, Շուռնուխի արեւելյան շրջանը եւ Կապանի օդանավակայանի մոտակայքը, Հայաստանի տարածքում են գտնվում:

տարածքները 1921 թվականին Ստալինը սովեց Աղբեջանին: Իսկ իրենց քարտեզների մեջ նրանք գծում են, թե մինչեւ Սեւ ծովի ափը իրենց երկրամասն է: Ուրեմն միջազգային իրավական որեւէ քարտեզ գոյություն չունի: Որքան էլ իրենք ասեն, մինչ օրս որեւէ սահման գծված չէ: Տպագրված առաջին քարտեզը 1926-ին է, կա Հայաստանի 1922-ի քարտեզ, որ նույնպես ցույց է տալիս, թե դրանք Հայաստանի մաս են: Բայց դրա վրա չի կարելի հենվել, քանի որ պաշտոնական չէ: Պաշտոնական նշանակում է, որ դրա տակ կա Հայաստանի եւ Աղբեջանի պաշտոնական ներկայացուցիչների կնիքը: Պաշտոնական քարտեզները պահվում են գաղտնի: Ռ. Գալջյանը դրանցից երկուսի տեղը մատնանշեց, մեկը գտնվում է Թբիլիսիում, մյուսը՝ Մոսկվայում: Դրանք պատրաստվել են ԽՍՀՄ գլխավոր շտաբի կողմից:



Regions outlined blue, although under Armenian control, by Stalin's decision, of July 1921, were handed over to Azerbaijan.

1923-29 թվականներին Մոսկվայի հրամանով, Անդրկովկասյան Դաշնության կարգադրությամբ, առանց հետեւելու օրենքին եւ հարգելու տեղաբնակ գյուղացի բնակիչների մարդկային իրավունքները, նրանց հողամասերից, անտառներից ու արոտավայրերից հարյուրավոր քառակուսի կիլոմետրեր հանձնվեցին Աղբեջանին, ուր, իբր պետք է ստեղծվեր Կարմիր Քրդստան գավառը: 1930-ին Կարմիր Քրդստան ստեղծելու գաղափարը չեղարկվեց, սակայն դրան հատկացվելիք

1927 թ. քարտեզի վրա այս տարածքները նշված են կապույտ գույնով: Ուշադրության արժանի է այն, որ այդ օրերին Հայաստանն ու Արցախը բաժանում էր միայն Հակարի (Աղավն) գետը: Իսկ անկլավներն ընդհանրապես չկային: Սակայն այս քարտեզները կարող են համարվել «ոչ պաշտոնական», քանի որ երկուստեք վավերացված չեն: Այստեղ առկա է մի կարեւորագույն նրբություն: Դեռեւս 1922-23 թթ. Խորհրդային Միությունը հրատարակել է զինվորական մանրակրկիտ քարտեզներ, որ ցուցադրում են ժամանակին ընդունված սահմանները, որոնցում բացակայում են Աղբեջանին «նվիրված» տարածքները: Սակայն Հայաստանի սահմանների այս քարտեզների օրինակները չեն տրվել

Հայաստանի իշխանություններին: Դրանք առկա են միայն Մոսկվայում եւ Թբիլիսիում: Ըստ Ռ. Գալջյանին հասած տեղեկությունների, մինչ այժմ չեն ընդառաջել այս քարտեզների օրինակները Հայաստանին տրամադրելու խնդրանքին:

«Եթե սահմանագծման խնդիր կա, ուրեմն սահմանի հարցում խնդիրներ կան, որ պաշտոնապես այսօր վավերական չեն: Ուրեմն պիտի ժամանակավորապես ընդունել ԽՍՀՄ քարտեզը, եւ երբ սահմանագծումը լինի, այն ժամանակ վերջնականացնել, կարծում է քարտեզագետը: Բայց եթե Հայաստանը հարաբերություն չունի Աղբեջանի հետ, Ռուսաստանի միջոցով է դա անելու, իսկ Ռուսաստանը մի անգամ արել է այդ գործն ի վնաս Հայաստանի, տվել է մեր հողերն Աղբեջանին: Երկրորդ անգամ ինչո՞ւ պիտի փոխի իր արածը: Եթե մեզ բարեկամ է, Աղբեջանին ավելի շատ բարեկամ է, քանի որ ֆինանսական խնդիրներ կան: Պիտի կարողանանք դիվանագիտորեն այն տերմինը դնել Աղբեջանի պաշտոնական ճանաչման մեջ, որ սահմաններն այսօր ճանաչում ենք խորհրդայինով, բայց այս սահմանները խնդր առարկա են, այդ պատճառով պիտի սահմանագծման հանձնախումբ ստեղծենք: Սահմանագծումը տարիներ կտեւի: Բարեկամ երկրների հետ տարիներ է տեւում. Այսօր Վրաստանի հետ մեր սահմանագծումը դեռ չի ավարտվել՝ 25 տարի աշխատում են: Աղբեջանի հետ որքա՞ն կտեւի, քայլ առ քայլ պիտի այդ ճանապարհն անցնել, ոտքով քայլելով, գծելով, համաձայնելով, սակարկելով»,- եզրակացնում է քարտեզագետը:

Ռ. Գալջյանն ասում է, որ գիտական աշխարհը գիտե իրականությունը եւ Հայաստանի կողմն է: Օրինակ, Մոսկվայում Ջախարով անունով մի մասնագետ կա, հայ ժողովրդի պատմության եւ աշխարհագրության մասնագետ է, հայապաստ հողվածներ շատ ունի: Ռ. Գալջյանը պատմեց, որ կոնֆերանսի ընթացքում մտնեցել է իրեն և պատմել թե ամսական ստանում է 800 դոլար: Աղբեջանցիները նրան առաջարկել են ամսական 5000 դոլար, որ ի նպաստ իրենց հողվածներ գրի, բայց չի ընդունել: Սակայն, կամ, որ փողի դիմաց ընդունում են:

Աղբեջանական անկլավները տեղադրված են Հայաստանում՝ նպատակ հետապնդելով մեր ճանապարհները փակել: Նույնը կատարվել է Շուռնուխի՝ Գորիսից Կապան ճանապարհի շրջանում, հայկական մայրուղին բազմիցս մտնում է Աղբեջանի տարածք, դուրս է գալիս: Նույնն է Տավուշում: Աղբեջանական հատվածը սեպի մնան խրվել է, կտրել Հայաստանի մայրուղին: Մինչդեռ իրենք այնտեղ գյուղ չունեն, ոչինչ չունեն: Անկլավները ստեղծվել են, որ Հայաստանի արտաքին կապը տան աղբեջանցիների ձեռքը: Դա Խորհրդային Միությունն է արել:

Ավելացնեք, որ 2016թ. Ռ. Գալջյանը Արցախում քարտեզների մասին դասախոսություն է կարդացել, ցույց տալով վերջին քարտեզը, ասել է.« Այսօրվա Հայաստանի քարտեզն է և Արցախի հետ միասնաբար՝ 42 հազ. քառակուսի կիլոմետր: Արդեն 22 տարի է՝ այս իրավիճակն է: Ինչքա՞ն կկարողանանք դա պահել, մեր դիվանագետներին որքա՞ն կհաջողվի դա անել, չենք կարող կանխատեսել, բայց հույս ունենք, որ գոնե մեծ մասը ձեռքից չենք տա»:

Ցավոք, գիտնականի կասկածանքն իրություն է դարձել:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՆԿԱՐԿՈՒՄ

ՊԻՏԻ ԱՊՐԵՆՔ ԵՎ ԱՐԱՐԵՆՔ



Սահվան աչքերին նայելով՝ նրանք նետվեցին մարտի: Գնացին, որ փրկեն հողը հայրենի, որ թեկուզ ընկնեն, կյանքեր պարզեն, և երկիրը շարունակի ապրել: Հազարավորներն անմահացան, և բյուրավորներն այսօր նրանց կանգնած տեղում երդում են տալիս...

44-օրյա պատերազմից անցել է մեկ տարի: Հիշողությունները գնալով չեն մարում: Վերքերը չեն սպիանում: Հայրց եկեղեցիները միասին կոչնակում են. զանգեր տազանայի՞, սթափության, զգոնության, հիշատակի խնկարկման, ապրելու կամքի՞... Թերևս բոլորը միասին:

Արցախյան սրբազան հողի մի անկյունում ևս՝ Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 դպրոցում սեպտեմբերի 27-ին հիշատակի խնկարկումի արարողություն էր: Փառքի սրահում Արցախյան զոհամարտում դպրոցի նահատակված շրջանավարտների հիշատակի հուշատախտակի դեմ-դիմաց նոր հուշատախտակ է ստեղծվել՝ նվիրված 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի՝ Թուրքիայի և իսլամական ահաբեկիչների ներգրավմամբ Արցախում սանձազերծած լայնամասշտաբ պատերազմում նահատակված դպրոցի շրջանավարտներին:

Հավաքվածները՝ մայրաքաղաքի դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, աշակերտներ, զոհվածների ծնողներ, հա-

րագատներ, քաղաքապետարանի աշխատակազմի, ՊԲ ներկայացուցիչներ, ջութակի հեծելաբանների ճակատային խումբի անդամները մատուցեցին 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակին: Իսկ դպրոցի դահլիճում աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ:

Միջոցառումը վարող աշակերտուհիները հակա-նե-հանվածներ թվարկում են դպրոցի նոր նահատակների անունները: Եկրանին գալիս-անցնում են նրանք՝ պետական մարմինների աշխատողներ, սովորողներ, արհեստավորներ... տարբեր մասնագիտության տեր, բայց որոնց համար վտանգի պահին առաջնահերթը հայրենիքի պաշտպանի գործն էր, և անվարան նետվել են մարտի:

Աշակերտներն ասումնքի, պարի, երգի, նվագի միջոցով իրենց հավատարմությունն արտահայտեցին նրանց կիսատ թողած գործը շարունակելու մասին: «Զոհի պես չըն-



Կան նրանք, ընկան իբրև մարտիկ,- ասացին: Դպրոցի տնօրեն Լյուդա Գևորգյանի խոսքով՝ հայրենասիրությամբ տոգորված իրենց սաները սեպտեմբերի 27-ից նետ-

վեցին մարտադաշտ: Հայրենիքի զոհասեղանին իրենց զուխը դրեցին 16 շրջանավարտներ՝ ազգի պատիվը բարձր դասելով սեփական կյանքից: «Մենք ողբում ենք մեր հազարավոր նահատակների համար, բայց նաև կռում ենք շանթեր վերածնության», - մանկավարժի իրենց առաքելության գլխավոր ուղղության մասին էր նաև տնօրենի խոսքը՝ հուսալով, որ հաջորդիվ կլինեն միայն հաղթանակի բերկրալից տոներ:



Քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Թերեզա Ղարախանյանը կսկսում է մեր անդամների կորուստների համար: Բայց, փառք Աստծո, Հայրց աշխարհում ծնվում են նոր մանուկներ, որոնք, իհարկե, չեն փոխարինի ընկածներին, բայց կկանգնեն նրանց տեղը և կշարունակեն գործը նրանց: 44-օրյա պատերազմը նաև ցավալի դաս էր, թե այսուհետ ինչպես չպետք է ապրենք, և ինչպես պետք է անել, որ հայ ժողովրդի հետ այլևս նման ձևով չվարվեն. «Այն հողը, որ մեր տղաների համը է զգացել, չպետք է թողնենք»:

Ի հավաստումն բոլոր ասված և չասված խոսքերի՝ աշակերտները զիլ ծայնով երգում են. «Պիտի ապրենք, ապրենք և արարենք, հանուն կյանքի, հանուն սիրո, խաղաղության»:

Ս.ԳԱՐԻԵԼՅԱՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶԻ ԴԱԿԱՆՈՒՄ

Քայլում են ազգիս համար քավարան դարձած հետպատերազմյան մեկամյա ճամփով ու դեռ ի գորու չեն լիովին հասկանալու այդ մեծ ողբերգության իրական դերակատարներին: Շատ էինք ավելացել աշխարհում, 10 միլիոնը բե՞ռ էր մեր կամ աշխարհի ուսերին, որ չկարողացանք այդ ծանրության տակ դիմանալ, թե՞ ուղղակի շահարկեցին մեր բախտը, ու զոհասեղանին դրվեց մի քանի հազար երիտասարդի կյանք: Հայաստան աշխարհին ու Արցախը տեղ չէին՝ անում նրանց համար, որ մատաղացու զանգերի պես անխնայ մորթվեցին, թե՞ արդեն շատ էին հայրենյաց պաշտպանները, ու պետք էր նրանցից ձերբազատվել:

Միտք են անում, միտք ու բավարար պատասխան չեն գտնում: Ամբողջ մի տարվա մեջ մեր ազգը հուղարկավորման արարողություն էր կատարում ու դեռ չի ավարտել: Ամեն բոթի հետ նորանում է վերքը ու չի հասցնում սպիանալ: Ամեն անգամ էլ նորովի են բացահայտում հերոսի, որ անվարան մարտի է նետվել ու հերոսացել ռազմի դաշտում: Ուզում են անընդհատ ներկայացնել նրա խիզախ կերպարը ու սերունդներին դաստիարակել անձնուրացության ոգով, որ դարերով շքանշան նրա անունը, ու սերունդներ դաստիարակվեն այդ նվիրյալների օրինակով: Հիշողության շրջանակն անձայրածիր է. առաջին ծննդյան օրը, մանկապարտեզի մահճակալը, առաջին դասարանը, նստարանը, Վերջին զանգը, թողարկման երեկոն... անվերջանալի իրողություններ, որ կարելի է անընդհատ թվարկել:

Այդ հերոս տղաները մեզ համար անցյալ չեն դառնա, քանի որ նրանք մեր ապագան էին: Ուրեմն՝ միշտ կմնան ներկա, որովհետև մենք կորցրինք մեր ապագան: Այսպես է կյանքի անվիճելի փիլիսոփայությունը. կորցնելուց հետո են հասկանում կորստի սիմվոլությունը: Վախվորած ենք քայլում մի բուռ դարձած այս հողակտորի վրա, որ ներծծված

է բազմահազար երիտասարդների սուրբ արյունով՝ հանկարծ ցավ չպատճառեմք հազար տեղից խոցված մարմիններն իր գիրկն առած ու դեռ չսպիացած, անամոք սրտերն ամփոփող հողաշերտին, որի վրա երեկ քայլող զարուհների թարմ ոտնահետքերն են:

Ե՞րբ են արդյոք թեթևանալու մեր՝ կապարից էլ ծանր հոգիները, և մի՞թե դա տեղի է ունենալու, թե՞ զերեզման ենք իջնելու՝ կքած այդ ծանրության տակ: Ախր այսպես անարժանապատիվ կյանքով ապրող ազգ չենք մենք: Հազարամյակների մշակույթը կրող և աշխարհին արժանավոր գավակներ պարզած ազգը ո՞նց կարողացավ խեղճանալ մի քոչվոր ու անհայտ ծագման ցեղախմբի առաջ: Այս ծանր մտքերն անընդհատ բզկտում են մեր մտքերը, և միակ բանը, որ մեզ կապում է կյանքին, Արցախյան վերջին, հրեշավոր պատերազմի զոհերի անմար հիշատակի առջև ապրողների հարգանքի տուրքն է, որ ամեն վայրկյան հոգու պարտք է դարձել բոլորիս համար: Ինչքան էլ փորձենք թեթևություն զգալ, չի ստացվում, քանի որ այդ հերոս տղաները այցի են գալիս մեզ քուն թե արթուն: Նրանք կոչում են ապրողներին՝ չվարանել հայրենյաց հողի պաշտպանության գործում: Այդպիսի կոչ է հղում մեզ մեր Սարմենը, որը մեկն էր այն հազարավորներից, ում համար հայրենիքից ու ընկերներից թանկ ոչինչ չկար: Պատահական չէ, որ հերթական միջոցառումը էլի նվիրված էր նրա անմար հիշատակին: Նրա սիրելի վայրը դպրոցն էր, իր դասարանը, դասընկեր, ընկերները, ուսուցիչները, սրբությունը՝ Արցախը, որի համար նվիրաբերեց իր մատաղ կյանքը (դաժան պատերազմից մեկ տարի անց է բոլորել նրա 20-ամյակը): Նրա մասին կարելի է անվերջ խոսել: Օրինակ՝ տողերիս հեղինակի համար նա գիտության ծարավ ու շատ հետաքրքրասեր աշակերտ էր, որը, ավաղ, չհասցրեց հազեցնել այդ ծարավը: Բարձր միավորներով ընդունվեց Երևանի ճարտարապետական համալ-

սարանը. ապագայի համար շատ ու շատ նպատակներ ուներ, որ մնացին անկատար: Հայրենասիրությունն ու ընկերասիրությունը հավասար արժեք էին նրա համար: Այդ է պատճառը, որ բուհ ընդունվեց, բայց չհասցրեց նստել ուսանողի նստարանին ու վայելել ուսանողական հետաքրքիր կյանքը (չէր ուզում հետ մնալ ընկերներից, որ արդեն մեկնել էին ծառայության): 44-օրյա պատերազմի ժամանակ էլ ապացուցեց իր հայրենասպաշտությունը և ընկերասիրությունը: Հարություն էր, երբ լսեց, որ առջևի դիրքերի վրա թշնամին հարձակում է ձեռնարկել ու շտապեց. իր կարիքն այնտեղ կար: Ոստիք նենգ է ու արյունարբու: Նրան հասավ, որ ընկերը վիրավոր է, ու չհապաղեց, գնաց օգնության... Ոստիկ դավադիր գնդակը նրան էր սպասում: Ընկերը փրկվեց, բայց հետո մահացավ (ծանր վիրավոր էր): Մարեց նաև Սարմենի մատաղ կյանքը: Այս մեկ տարվա մեջ նրա մասին հիշողությունները հանգիստ ու դադար չեն տալիս մեզ: Տճօրեն Լ. Սոսիյանի համար ծանր է արտահայտվել, քանի որ նախկին սանը դպրոցի աչքն էր: Զինղեկն էլ ասելու շատ բան ունի Սարմենի մասին, քանի որ ռազմագիտության դասերին հնչեցրած նրա հասուն հարցերն իսկ խոսում էին հասուն ու կայացած հայրենասերի համարձակության ու խիզախության մասին: Նաև քաղաքագետի խորաթափանցություն ուներ. խոսում էր մեր պատմության անցյալի դեպքերի մասին, գնահատում ճիշտը, բացահայտում սխալները: Աչքի էր ընկնում հատկապես մարտավարության դասերին: Դասուցել Մ. Մելքունյանն առանց հուզմունքի չի կարողանում նկարագրել իր սանին, որը բնագիտամաթեմատիկական առարկաների ժամերին հետաքրքիր «զրուցակից» էր: Հիշում է ամեն մի մանրուք, որ կապված է իր հերոս աշակերտի հետ, ու հպարտ է, որ դասավանդել է նրան: Ծառայակից ընկերները ևս դպրոցում են. ծաղիկներ են խոնարհում իրենց հավատարիմ ընկերոջ

պատվանդանին ու նորովի կերտում Սարմենի կերպարը: Ուսուցիչը ընդգծում է ընկերոջ քաջությունը, համարձակությունը: Շուտ հասցրեց մտերմանալ Սարմենի հետ Հաղորթությունը, բայց, ցավոք, կարճ տևեց այդ մտերմությունը: Սակայն չի մոռանում նրա տված խորհուրդները և ընկերների մարտական ոգի փոխանցելու կարողությունները: Մյուս ընկերը՝ Արսենը, շեշտում է Սարմենի՝ համարձակ ու զրագետ զինվոր լինելու փաստը և խոստովանում, որ շատերն էին առաջնորդվում (նաև ինքը) Սարմենի խորհուրդներով: Իրեն երջանիկ ու հպարտ է համարում, որ ճանաչել է Սարմենի նման հերոս զինվորի:

Ահա այսպես ժամանակ առ ժամանակ մեր միակ մխիթարությունը գտնում ենք մեր քաջ նահատակների հիշատակին նվիրված միջոցառումների մեջ, որոնց ընթացքում ավելի են ճանաչում ու գնահատում նրանց գործը:

Դպրոցի փառքի սրահում տեղադրված վահանակի նախկին չորս տասնյակ ազատամարտիկների շարքը լրացվել է ևս չորս հերոսով, որոնք լուսանկարներից ժպտում ու պատգամում են մեզ՝ երբեք չկտրվել անհաջողություններից ու համառորեն պայքարել:

Թող այլևս այդ վահանակը լրացումներ չունենան, և Արցախ աշխարհում հաստատվի հարատև խաղաղություն, որ այլևս մեր սաները պայքարը մղեն միայն գիտության բարձունքները նվաճելու համար: Խաղաղվեն մեր որդեկորույս մայրերը, և մեր նորատի հարսները նորանոր Սարմեններ, Ալբերտներ, Ռոբերտներ, Արմենակներ պարզեն Արցախ աշխարհին, քանզի Արցախը կանգուն է նրանցով:

Համոզված ենք՝ կապի Արցախը ու դեռ իր ասելիքը կհղի աշխարհին:

Սուրբայա ԴԱԶԱՐՅԱՆ

ՊԱՏՊԱՍ

ԻՄ ԱՐՑԱԽ

Բոլորել է մեկ տարին ահասարուռ այն օրից, երբ թշնամին հարձակվեց Արցախ աշխարհի վրա՝ մահաբեր արկեր թափելով շուրջբոլորը: Քանդվեց հայի շեն օջախը, թալանվեց հայի վաստակն ու ունեցվածքը:

Եվ տարագիր հայը վերստին բռնեց տեղահանության ճամփան, գնաց դեպ անորոշություն...

Չերոսածին հայ մայրերի որդիները ոտքի ելան՝ պաշտպանելու հող հայրենին այն գիտակցումով, որ անպարտելի է նա, ով արյան գնով է պաշտպանում սեփական երկիրը:

Ոտքի ելան, կռվեցին հայրենի հողի համար, պայքարեցին ու, ավա՛ր, նահատակվեցին հանուն հայրենիքի:

44-օրյա պատերազմում նահատակված քաջորդիների հիշատակին էր նվիրված օրերս Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցում կազմակերպված հուշ-միջոցառումը, որին ներկա էին ԱԶ ԿԳՄՍ նախարար Լ. Ղարախանյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Գ. Սարգսյանը, փոխքաղաքապետ Ս. Ղուկասյանը, քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Թ. Ղարախանյանը, ԱԿԱՅՄ հասարակական կազմակերպության նախագահ Վ. Գրիգորյանը, զոհված զինծառայողների հարազատներ, հյուրեր:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Է. Գաբրիելյանը:

- Այսօր սրբատեղի դարձած դպրոցի փառքի սրահում ավելանում է ևս մի հուշատախտակ, որից կենսախիճը հայացքով մեզ են նայում դպրոցի 5 շրջանավարտներ ու նրանց ռազմագետ ուսուցիչը: Չերոսածին թափած արյունը սրբացրել է մեր հողը և պարտավորեցնում է մատաղ սերունդին շարունակելու և ավարտին հասցնելու նրանց կիսատ թողած գործը: Այսուհետ մենք պարտավորվում ենք հավերժ հայկական պահել մեր սրտաչափ հողը, հանուն որի կռվել են ու նահատակվել հազարավոր լույս տղաներ:



Այնուհետև հուշատախտակին ծաղիկներ խոնարհեցին ներկաները՝ ցավ, վիշտ, թախիծ ու տառապանք հոգիներում անթելած:

Միջոցառման երկրորդ մասը դպրոցի դահլիճում էր:

Անչափ հուզիչ էր մուտքը:



Չպարտ արցախուհին անմեղ շուրթերով հնչեցնում է այն միտքը, որ անսահման սեր է տածում հայրենի տան եզերքի, իր պապերի տան նկատմամբ: Ու սկսում է պատմել իր ու իր պապերի տան հեքիաթը, հարատևելու հեքիաթը...

Եվ հավատում ու հավատացնում է, որ աշխարհի ամենագեղեցիկ, ամենախիսկական ու ամենամեծ աշխարհամասը իր պապի տունն է՝ Արցախի լեռներում ծվարած, երկնքի անհունին հայացքը սևեռած:

Բայց ահա սև ու մութ ամպեր են կուտակվում Արցախի երկնակամարում, ուր անվրդով ապրում էին պապն ու արցախուհին:



Ահա հայրենի թաղավարը կորցրած աղջնակը դողողացող շուրթերով արտասանում է. Բարև, Արցախ, Ի՞նչ կա այդտեղ, քո ծորերում... Եվ հեղձուկը խեղդում է կոկորդը... հայրենի տունն է հիշել...

Տեսասահիկները համահունչ սահուն են մեկը մյուսի հետևից: Ներկաները նորից վերապրում են 27-ի արյունոտ լուսաբացը: Ու կրկին հնչում է աշակերտների համոզիչ խոսքը.

- Մենք ոտքի ելանք, թեկուզ դժվարությամբ, ապրեցինք չապրած կյանքերի գնով...

Ահա տեսասահիկում Արմեն Դոլուխանյանն է՝ պարզ, անկեղծ ժպիտով... Նա հերոսական սերունդ կրթած ուսուցիչ- ռազմագետ է, որի թողած ավանդույթները կհավերժեն հայ ռազմարվեստի երկնածիրում:

Ահա Մխիթար Ասրյանը՝ խոհեմ, հավասարակշիռ, փորձառու ու հայրենամեծ:

Չաջորդիվ Սերգեյ Գաբրիելյանն է ու մյուս քաջերը, որոնք մարտեցին՝ իրենց հոգու լույսը փոխանցելով սերունդներին:

Բայց հայտնվում է նորից արցախուհին, որը վստահությամբ ի լուր աշխարհի բարձրածայնում է.

- Արցախում անպայման հրաշք կլինի.

Ապրի՛ր, իմ Արցախ, իմ ու պապերիս իրական հեքիաթ...

Ներկաները հուզված են:

«Իմ Արցախ» խորագրով միջոցառումը ձևով ու բովանդակությամբ հայրենասիրության ու նվիրումի յուրօրինակ երգում էր, պատգամ, որ տրվեց մատաղ սերունդին՝ սիրել հող հայրենին, հասնել այն վսեմ նպատակին, որի անունն է հաղթանակ:

- Պայքարենք և հուսանք, որ մի օր կանենա մշուշը, և լուսավոր այգաբացը կշողա Արցախի երկնակամարում, -իր եզրափակիչ խոսքում շեշտեց տնօրեն Է. Գաբրիելյանը:

Իսկ ԱԶ ԿԳՄՍ նախարար Լ. Ղարախանյանը իր խոսքում նշեց, որ աշակերտների և ուսուցիչների ելույթը պատգամ է ու բացատրագիր, որ պատմության դասերը պետք է սերտել, այլապես պատմությունը կպատժի այն շրջանցողներին:

Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոց

ՉԱՓՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Մեծ շահ է աստվածապաշտությունը՝ գոհության զգացումով հանդերձ»:

(Ա ՏԻՆ. 2 Թ)

Չափավորության մասին պատկերացումները հասարակության լայն շրջանակներում տարբեր են, որովհետև երևույթի ընկալումը նախ և առաջ քրիստոնեական տեսանկյունից ընկալողները համաչափ են դարձնում ողջամտության հետ: Իզուր չեն շեշտել ողջամտությունը, որը բարի և առաքինի մարդու կերպարին է բնորոշ, ու դրանով են նաև առարկայական դառնում մի շարք հատկանիշներ, որոնք շնորհվում են Աստծո կողմից, և մարդուս է վերապահված դրանց անաղարտությունը:

Չափավորությունը նաև կյանքի բանաձև է, որովհետև նա, ով ապրում է համեստ ու բավարար, Աստծուց ստանում է ավելին, որի մասին շատ անգամ չէր պատկերացնում:

Գյուղացին տարին տասներկու ամիս աշխատում է և հալալ քրտինքով իր տունը պահում, երջանիկ ապրում, բայց չի գնում թանկարժեք օժանելիքներ և բրենդային զարդեր, որը ոչ այնքան կարևոր է, ինչքան իրեն անհրաժեշտ հացն ու պանիրը, սեփական հողում ցանած կանաչին: Գյուղացին բացի չափավորության օրինակ լինելուց նաև միաբանու-

թյան բացառիկ օրինակ է, որովհետև եթե մի գյուղում նման մարդիկ տասնյակից ավել են, ապա մենք նաև ներքին ու արտաքին մարդկային խաղաղություն ենք տեսնում, որն Աստծո կարևորագույն պատվիրաններից է: Կարևոր է նաև ազատության մեջ չափավոր լինելը: Երբ Աստծո ստեղծած մարդը, շեղվելով ճշմարիտ ճանապարհից, մախրում է այն իրը և այն առարկան, որը բոլորովին դեռ իրեն հրատապ պետք չէ, անտեսում է այն, ինչը ավելի մատչելի է, բայց առաջին անհրաժեշտության է, ապա չի կարող հասնել նրան, ինչին ուզում է: Մեկ է՝ դատարկածեղն է մնում նա, ով երկրորդականը վեր է դասում առաջնայինից:

Մեր առօրյա աշխատանքում պետք է նաև ներքին համերաշխությանը հետևել՝ չափավորելով մեր խոսքը, գործը, բողոքներն ու պատկերացումները: Եթե ինչ-որ բան անում ենք տրտմալով, ապա արդյունքը գոհացուցիչ լինել չի կարող, որովհետև չափի մեջ հանգիստն է կարևոր, և պետք չեն ավելորդություններ:

Չափավորություն ասելիս ակամայից նաև մարդկանց դժգոհությունն են հիշում, երբ ինչ-որ բան շատ են ցանկանում, և չի լինում, հարկադրաբար, ուրիշներին հակառակվելով և, այսպես ասած, մրցակցության մեջ մտնելով՝

անում են մի բան, որը ոչ միայն ներքին խռովության է հանգեցնում, այլև հատում է առաքինի մարդու խաղաղությունը:

«Լավ է մի պատահ համով հացը՝ խաղաղությամբ, քան միս ու բարիքով լի տունը՝ թշնամությամբ» (Առակ. ԺԷ):

Ամենակարևորներից է այս պատգամը, որը ևս մեկ անգամ հիշեցնում է արդար աշխատանքի ու երախտագետ լինելու մասին: Մենք սովոր ենք, երբ ունենում ենք ամենալավ իրերը, ամենալավ ուտելիքը, ամենագեղեցիկ հագուստը, բայց սովոր չենք այդ ամենի համար երախտագետ լինել Աստծուն, որովհետև վերջիվերջո նա է մեզ ստեղծել ու նա է այդ ամենը մեզ պարգևում:

«Երջանիկ է այն քաղաքը, որի բնակիչները ժրջան են ու վայելում են իրենց աշխատանքի վարձը, ձեռք են բերել միայն ապրելուն անհրաժեշտ բաները և փախչում են ավելորդից ու զվարճություններից. կայքն ու կարասին, հագուստն ու տունը, կերակուրներն ու ըմպելիքները համեստ են ու չափավոր: Այնտեղ կարելի է տեսնել քաղաքացիների միջև խաղաղություն ու ընտանիքների միաբանություն, օրենքին հպատակություն ու մեծերի հանդեպ հնազանդություն, մարդահաճոների հանդեպ ատելություն, բարեսիրտների հանդեպ սեր և ուրախ ու ազատ

կյանք»,- կարդում ենք Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցու «Խրատի թանգարան»-ում:

Չափավորության մեջ ապրող նաև խաղաղության մեջ է ապրում, քանզի հրաժարվում է օրվա մեջ բոլոր մտքերը նյութի վրա կենտրոնացնելուց: Ծոխությունը տառապանքի բույն է: Այս երկու ապրելաձևերն անհամատեղելի են, ինչքան էլ մարդու երևակայության մեջ տեղավորվի, ու մարդն ինքն իրեն հարմարեցնի այդ իրողությանը: Չափավորությանը հակադարձող շատ երևույթներ կան, որոնք արտաքուստ գեղեցիկ են, ձգող:

Պատրաստեց Կոկա ԱՐՋՈՒՄՆԱՆԸ

ԿՈՐԵԼ Է

Դավիթ Թելմանի Լալայանի միջնակարգ կրթության ԱԱ N 028743 համարի ատեստատը՝ տրված Ասկերանի շրջանի Ավետարանցի միջնակարգ դպրոցի կողմից 2012 թվականին: Չամարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՍՐԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Յ. Թումանյան փ. 95, 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագոյություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 30.09.2021թ.: